Azg
Azg armenian daily

3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1997, ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 232 (1486)

Ազնավուրը Փարիզում կտա բարեգործական համերգ՝ ի նպաստ Հայաստանի դպրոցների

ՓԱՐԻԶ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 1998 թվականի հունվարի 4-ին Փարիզի «Պալե դը կոնգրե» դահլիճում տեղի կունենա Շառլ Ազնավուրի հասուկ բարեգործական համերգը՝ ի նպաստ Հայաստանի դպրոցականների: Տոմսերի վաճառից եւ նվիրատվություններից ստացված գումարը կեռադարձվի WORLD BANK GROUP եւ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից: Ստացված ողջ գումարը կտրամադրվի Հայաստանի դպրոցների զարգացմանը:

Շրջմոլիկ եւ մուրացիկ երեխաների շուրջկալներ Երեւանում

Ոչ պաշտոնական աղբյուրներից հայտնի դարձավ, որ դեկտեմբերի 1-ից սոցիալական ապահովության նախարարությունը շուրջկալներով հավաքում է շրջմոլիկ եւ մուրացիկ երեխաներին: Միջոցառումներն անց են կացվում շրջան առ շրջան: Սոցապահովության համապատասխան պաշտոնյաները հրաժարվեցին որեւէ ինֆորմացիա տրամադրելուց՝ պատճառ բերելով անորոշությունը եւ եզրակացություն անելու վաղաժամությունը: Հետագա օրերին հավանաբար անհրաժեշտ պարզաբանումներ կարվեն:

ԱԿՑԻԱ

Թերթերի մեկօրյա նախազգուշական գործադուլ՝ այսօր

Հայաստանի ՁԼՄ-ները հանդես են գալիս համատեղ հայտարարությամբ

Նկատի ունենալով հանրապետության ողջ տարածքում մամուլի զարգացման, անգամ գոյատեւման առաջ ծառացած խնդիրները, Հայաստանի զանգվածային լրատվության միջոցները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, միաժամանակ որոշելով թերթերի նախազգուշական մեկօրյա գործադուլ, որի նպատակն է հասարակական կարծիքի եւ պետական համապատասխան մարմինների ուշադրությունը սեւեռել մամուլի անհապաղ լուծում պահանջող հարցերի վրա:

Հայաստանի իշխանությունները, ասված է հայտարարության մեջ, ժամանակ առ ժամանակ մամուլի խնդիրների նկատմամբ ըմբռնողություն ցուցաբերելով եւ խոստումներ շռայլելով հանդերձ, առ այսօր իրական քայլեր չեն ձեռնարկել: Մինչդեռ էլեկտրաէներգիայի, տրանսպորտի եւ կապի սակագների, թղթի փոխադրման, տպագիր լրատվամիջոցների արտադրության եւ տարածման ծառայությունների գների բարձրացումը, ուղեկցված ազգաբնակչության գնողունակության նվազմամբ, թելադրում է հրատարակությունների ինքնարժեքի բարձրացում: Իրավիճակի անընդհատ ծանրացումը հանգեցրել է թերթերի եւ ամսագրերի տպաքանակի ավելի նվազման:

Քամահրանքը հայկական ՁԼՄ-ների խնդիրների հանդեպ կայուն ավանդույթ է դարձել կառավարության վերջին տարիների իրարահաջորդ բոլոր կաբինետների համար, այնուհետեւ կարդում ենք հայտարարության մեջ: ՁԼՄ արտադրանքի թողարկման եւ տարածման մենաշնորհ ունեցող պետական ձեռնարկությունների ղեկավարները համագործակցության այնպիսի պայմանագրեր են պարտադրում, որոնք խմբագրությունների համար նախատեսում են սրկական պայմաններ: Վերջերս Երեւանի բազմամարդ վայրերում վերացվել են թերթերի մի քանի կրպակներ, իբր դրանք հեռագայում նորերով փոխարինելու համար: Բայց ոչ ոք չի մտածում, որ չվաճառած մեկ-երկու հազար թերթերն անվերականգնելի վնաս են խմբագրությունների եւ ընթերցողների համար: Այս կողմից, թերթերի առաքումը հանրապետության տարբեր մարզեր իրականացվում է անկանոն, առանց հաշվի առնելու պահանջարկը:

Տեղեկատվություն ստանալու եւ խոսքի ազատության, հաղորդագրիչների սահմանադրական իրավունքի, ինչպես նաեւ ՁԼՄ-ների անկախության երաշխիքներն ապահովելու նպատակով, Հայաստանի լրագրողները հանրապետության իշխանություններից պահանջում են միջոցներ ձեռնարկել մամուլին պետական օժանդակություն ցուցաբերելու համար: Այդ թվում՝

1. Բարելավել «Հայմամուլ» պետական գործակալության բաշխման հաղորդակցությունն ու գործունեությունը ամբողջ հանրապետությունում, մարել բաժանորդագրության եւ իրացման գումարները, ինչպես նաեւ անհապաղ վճարել բոլոր պարտքերը:

2. Հարկերից ազատել, այդ թվում ավելացած արժեքի հարկից, շահութահարկից, մաքսային հարկերից ու տուրքերից իրավաբանական այն անձանց ապրանքների, ծառայությունների եւ շրջանառության ամբողջ համալիրը, որոնք մասնակցում են ՁԼՄ արտադրանքի արտադրությանը, տարածմանն ու իրացմանը:

Տես էջ 2

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Օլեգ Եսայանը ԼՂՀ Ազգային ժողովի նոր նախագահ

Դեկտեմբերի 2-ին ԼՂՀ Աժ նիստ տեղի ունեցավ՝ օրենսդիր մարմնի ղեկավարի պաշտոնակատար Էմմա Գաբրիելյանի նախագահությամբ:

Օրակարգի հիմնական հարցը ԼՂՀ

Աժ նոր նախագահի ընտրությունն էր, որի ժամանակ առաջադրվեց նորընտիր պատգամավոր Օլեգ Եսայանի թեկնածությունը: Վերջինս խորհրդարանին ներկայացրեց իր նախընտրական քաղաքական ծրագիրը եւ պատասխանեց պատգամավորների հարցերին: Ինչպես տեղեկացրեց ԼՂՀ Աժ մամուլի քարտուղար Ռուդոլֆ Մարտիրոսյանը, հաշվիչ հանձնաժողովի հրապարակած փակ գաղտնի քվեարկության արդյունքներով (կողմ՝ 27, դեմ՝ 4) Օլեգ Եսայիի Եսայանը ընտրվեց ԼՂՀ Աժ նախագահ: Նիստին ներկա էին ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը, կառավարության անդամներ, լրագրողներ:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Ստեփանակերտ

Զրեգ Շեքսպիրյան ձեռակերտում ժամանակն իր շավղից դուրս է եկել

Աժ-ի դեկտեմբերի 2-ի հերթական նիստի ավարտից հետո 69 պատգամավորների ստորագրությունների արդյունքում գումարվեց արտահերթ նիստ: Օրակարգի միակ հարցադրման օրենսդրական նախաձեռնության հիմնական հեղինակը Վանո Սիրադեղյանն էր: Իսկ օրակարգը ձեռակերտվել է այսպես. «ՀՀ տարածքում ժամանակի հաշվարկման կարգի մասին»: Օրինագծով առաջարկվում էր հետեւել ժամագոտիների միջազգային համակարգին եւ՝ ա) «ՀՀ տարածքում օրվա ընթացքը հաշվել ժամը 00.00-24-ը՝ օրվա սկիզբ ընդունելով կեսգիշերը», բ) տարվա ընթացքում ժամագոտու ժամին գումարել 1 ժամ, գ) սկսած 98 թ. ամեն տարի մարտի վերջին կիրակին ժամը 2.00-ին ժամացույցի սլաքները 1 ժամ առաջ տանել, իսկ հոկտեմբերի վերջին կիրակի օրը ժամը 3.00-ին՝ 1 ժամ ետ, դ) մինչ այդ, 1997 թ. դեկտեմբերի 21-ի գիշերը ժամը 2.00-ին ժամացույցի սլաքն առաջ տանել 1 ժամով:

Սակայն անսպասելիորեն պարզվեց, որ այս ողջախոհ եւ քաղաքականությանն առնչություն չունեցող առաջարկը բավական հակառակորդներ ունի:

Օրենսդրական նախաձեռնության հեղինակ, նոր-նոր «Հանրապետություն» խմբակցության նախագահ ընտրված Վ. Սիրադեղյանը կոչ արեց կողմ քվեարկել նախաձեռնությանը, ինչի արդյունքում կպակասի ժողովրդի նյարդային վիճակը: Սիրադեղյանն ընդդիմացավ Խ. Բեգիրջանի առարկությանը, նշելով, որ նա ընտրությունները լավ անցկացնելուց հետո որոշել է, որ Ֆրանսիայի ժամագոտուն միանալը «ինտեգրացում է», իսկ Ռուսաստանի հետ միանալը՝ սալիինիզմ:

Եղան տարբեր առաջարկներ: Կառավարությունն առաջարկում էր փոխել աշխատանքային ժամը, Արարատյանը պնդեց, որ օրինագիծն անպատասխան է եւ անկատար, ուստիեւ առաջարկեց մի մասը միայն ընդունել առաջին ընթերցմամբ:

Սիրադեղյանը պնդեց նախագիծն ամբողջությամբ ընդունել, որպեսզի մինչեւ նոր տարի «էդ նվերը մատուցենք մարդկանց»: Քվեարկությամբ օրինագծի մի մասն ընդունվեց միայն առաջին ընթերցմամբ, իսկ երկրորդ ընթերցումը որոշվեց անցկացնել հերթական նոստայում:

Ն. Մ.

Վանո Սիրադեղյանը «Հանրապետություն» խմբակցության նախագահ

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աժ դեկտեմբերի 2-ի նիստերի ընդմիջման ժամանակ կայացավ «Հանրապետություն» խմբակցության նիստը, որի ընթացքում ի գիտություն ընդունվեց Տեր Հուսիկ Լազարյանի հրաժարականը խմբակցության նախագահի պաշտոնից: Խմբակցության նոր նախագահ ընտրվեց Վանո Սիրադեղյանը:

Վարդան Օսկանյան-Նաիրա Մելքումյան դռնփակ հանդիպում

Ըստ «Ազատություն» ռադիոկայանի Ղարաբաղի թղթակցի, հավաստի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, երկուշաբթի ուշ երեկոյան Ստեփանակերտ է ժամանել ՀՀ արտգործնախարարի առաջին տեղակալ Վարդան Օսկանյանը: Նա հանդիպում է ունեցել ԼՂՀ արտգործնախարար Նաիրա Մելքումյանի հետ: Հանդիպումը կայացել է դռնփակ եւ նրա մանրամասների մասին պաշտոնական որեւէ հաղորդագրություն լրագրողներին չի ներկայացվել:

«ԱրմենՏելի» մրցույթը ավարտվում է

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «ԱրմենՏելի» սեփականաշնորհման համար հայտարարված միջազգային մրցույթը մոտենում է ավարտին: Ինչպես ասաց վարչապետի գլխավոր խորհրդական Վահրամ Ավանեսյանը, կառավարությունը 3 շաբաթ էքսկլյուզիվ բանակցություններ է վարում հունական OTE տելեկոմունիկացիոն կազմակերպության հետ: Ըստ պարոն Ավանեսյանի, բանակցությունների արդյունքների մասին, հավանաբար, հնարավոր կլինի հայտարարել մյուս շաբաթվա վերջում:

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանը դեռ վերջնական դիրքորոշում չունի՞ Ղարաբաղի հարցում

Երեքշաբթի օրը Ռուսաստանի ԱԳՆ-ի մամլո եւ լրատվության դեպարտամենտի փոխխոսնակ Վալերի Նեստերուշկինն իր ծեպազրույցում չափազանց հակիրճ անդրադարձավ Հայաստանի արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի այցին Մոսկվա: Իսկ «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին Վալերի Նեստերուշկինը հայտնեց, որ միջնորդ երկրների անունից հանդես եկող կառույցները բավական ինտենսիվ երկխոսություն են վարում հակամարտության մեջ ներգրավված կողմերի հետ՝ իրենց ջանքերի հիմնական բաժինը նպատակամղելով ծեղքման ապահովմանը: Թե վերջինս երբ ծեռք կբերվի, զգալի չափով կախված է այն բանից, թե ինչ դիրքեր կզբաղեցնեն հակամարտության մեջ անմիջաբար ներգրավված կողմերը: Համենայն դեպս, ընդգծել է դիվանագետը, Ռուսաստանի կողմից կատարվում են անհրաժեշտ բոլոր քայլերը՝ կողմերի դիրքերի մերձեցումն ապահովելու համար: Վալերի Նեստերուշկինը հրաժարվեց մեկնաբանել Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայումս հանդես բերվող նախաձեռնություններն ու առաջարկները՝ մատնանշելով բանակցությունների գործընթացի գաղտնիության մասին ծեռք բերված համաձայնությունը: Սակայն այդ կապակցությամբ ասաց հետեւյալը. «Այժմ բարդ է խոսել մեր դիրքորոշման վերջնական եւ հստակ պարամետրերի մասին, քանի որ շարունակվում են ինտենսիվ շփումներն ու աշխատանքը կողմերի հետ:

Հայաստանի եւ Ռուսաստանի արտգործնախարարների երեկվա աշխատանքային հանդիպման ժամանակ էլ, բնականաբար, այդ կարեւոր թեման չի շրջանցվել: Իսկ թե ինչպիսին կլինի այդ ջանքերի արդյունքը՝ գաղտնիք չէ, որ եւ՛ Մինսկի խմբի համանախագահներն են շարունակում ակտիվ աշխատել, եւ՛ մենք էլ, Բաքվի հետ եւս նմանօրինակ շփումներ ենք ունենում: Մեր ցանկությունն է, որպեսզի կոթենիագենում այս հարցի շուրջ եղած բորբոքվածությունը պակասի: Այդ նպատակին տանող միջոց է դիտվում կողմերի բռնած դիրքերի կառուցողական զարգացումն ապահովելը: Ինչպես նաեւ նպաստելը այն դրական տարրերին, որոնք, համենայն դեպս Մինսկի խմբի համանախագահների կարծիքով, հետզհետե սկսում են ի հայտ գալ գործընթացի մասնակիցների դժգոհություններում՝ տարաբնույթ կոնկրետ հարցերի առնչությամբ»: Ըստ Վալերի Նեստերուշկինի, շատ դժվար է կանխատեսել, թե համանախագահներին որքանով կհաջողվի մինչեւ դեկտեմբերի կեսերը ընդհանուր դրական հայտարարի բերել այդ ամենը: Ռուս դիվանագետի խոսքերով, բանակցությունների նախորդ փուլերի փորձը ցույց է տալիս, որ չարժե արտակարգ լավատես լինել: Ամենագլխավորն այն է, որ գործընթացը շարունակվում է, եւ որ կողմերը միահամուռ կերպով ընդգծում են դրա շարունակման անհրաժեշտությունը:

ՀՈՒԿ-ՀՅԴ հանդիպում

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում Հայ հեղափոխական դաշնակցության Գերագույն մարմնի ներկայացուցիչների եւ ՀՌԱԿ Հանրապետական վարչության դիվանի անդամների միջեւ:

Հանդիպման առանցքը Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հետ առնչվող երկու ավանդական կուսակցությունների տեսակետների հստակեցումն էր եւ հետագա հնարավոր համագործակցությունը: Երկու կուսակցություններն էլ համամիտ էին, որ Արցախի հիմնահարցը ներքաղաքական շահարկումների առարկա դարձնելն անթույլատրելի է եւ բոլոր հասարակական եւ քաղաքական ուժերի գործունեությունը հայրենիքում ու սփյուռքում պետք է ուղղել Արցախի խնդրի ազգանպաստ լուծմանը:

Համաձայնություն ծեռք բերվեց շարունակել աշխատանքային հանդիպումները՝ նպատակ ունենալով երկու ավանդական կուսակցությունների ներուժն առավելագույնս օգտագործելու Արցախի հիմնահարցի լուծման համար՝ երկուստեք դիտարկելով այն որպես Հայ դատի մաս:

ՀՈՒԿ ՄԱՄՈՒԼ ՊԵՏԱՆ

ԱԿՅՈՒ

Թերթերի մեկօրյա նախագգուշական գործադուլ՝ այսօր

Սկիզբը էջ 1

3. ՁԼՄ-ներին կամի եւ տրանսպորտային ծառայությունները տրամադրել արտոնյալ սակագներով ու դրույքաչափերով:

4. Անհապաղ տնտեսավարման տրամադրել այն շինությունները, որոնցից ՁԼՄ-ներն օգտվում են իրենց արտադրատնտեսական գործունեության ընթացքում:

Մենք պահանջում ենք ՁԼՄ-ների պետական աջակցության մասին մեր առաջարկների անհապաղ քննարկում եւ օրենսդրական ամրագրում, շեշտում է հայտարարությունը եւ եզրակացնում. «ՁԼՄ-ների նկատմամբ անվայելուչ վերաբերմունքի եւ մեր շահերի ոտնահարման դեմ, իբրեւ բողոքի նշան, մեր խմբագրությունները հայտարարում են մեկօրյա նախագգուշական գործադուլ, մեր թերթերի ու շաբաթաթերթերի հաջորդ համարները լույս չեն տեսնի: Մենք մեզ իրավունք ենք վերապահում մեր պահանջները պաշտպանելիս դիմել նաեւ այլ ակցիաների»:

Տեղեկացնենք, որ երկուշաբթի երեկոյան տվյալներով հայտարարությունն արդեն ստորագրել էին «Հայաստանի Հանրապետություն», «Հայոց աշխարհ», «Ազգ», «Գոլոս Արմենիի», «Այժմ», «Հայաստան», «Իրավունք», «Ֆուտբոլ պլյուս» թերթերը, «Պայքար» ամսագիրը, Հայաստանի ժուռնալիստների միությունը, ՁԼՄ-ների ընկերակցությունը, Երեւանի մամուլի ակումբը, Մամուլի ազգային ակումբը, Հայաստանի հեռարձակման անկախ ցանցը, «Հայք» ռադիոծրագիրը, «Լաստ» ռադիոկայանը, «Ագրոպրես», «Երեւան», «Առկա», «Նոյյան տապան», «Սնարք» լրատվական գործակալությունները:

Վերջում հայտարարության հեղինակները մյուս բոլոր ՁԼՄ-ներին կոչ են անում միանալ այս ակցիային, լրատվական գործակալություններին՝ լրատվություն հաղորդել միայն հանրապետությունից դուրս, իսկ ռադիո եւ հեռուստաընկերություններին՝ մանրամասն լուսաբանել գործադուլը:

Հիշեցնենք, որ բողոքի ակցիային միացած ՁԼՄ-ների ղեկավարների մամուլի ասուլիսը կկայանա այսօր, դեկտեմբերի 3-ին, Հայաստանի ժուռնալիստների միությունում, ժամը 12-ին:

Ըստ «Առավոտի» գլխավոր խմբագրի, իշխանավորները երազում են, որ Հայաստանում թերթ լույս չտեսնի

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Դեկտեմբերի 3-ին Հայաստանի զանգվածային լրատվամիջոցների հայտարարած նախազգուշական գործադուլի նպատակների եւ սպասելիքների մասին հարցով «Նոյյան տապանի» թղթակիցը դիմեց մի քանի թերթերի խմբագիրներին:

Հակոբ Ավետիսյան («Ազգ») - Հայաստանի 20-25 տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչները որոշել են ընտրել մամուլի դժգոհությունն արտահայտելու մեկօրյա նախազգուշական գործադուլի ձեւը, որպեսզի կարողանան հասարակության եւ համապատասխան մարմինների ուշադրությունը սեւեռել իրենց վրա: Խմբագիրները եւ տնօրենները արդեն կբացած են բոլոր պետական մարմինների խոսքումներից եւ քաղաքականներից, աշխատանքային հանդիպումներից եւ բազմաթիվ «միջոցառումներից»: Իսկ մեր թերթերն արդեն ինչահեղձ են լինում: Այսօրվա վիճակով. Հայաստանում մամուլի անգամ գոյատեւում չի կարելի ապահովել, ուր մնաց զարգացում: Սա պետք է ընդունել որպես թերթերի ինքնաբուխ ճիչ: Հայաստանի հանրապետության միջազգային վարկեր ստանալու գրավականներից մեկը նաեւ Հայաստանում ազատ մամուլի գոյությունն է: Եթե մենք թերթերս գոյություն չունենանք, այդ վարկերն էլ չեն տրամադրվի, իհարկե, մենք չենք ուզում, որ հարցը դրան հասնի: Եթե մեր պահանջները չընդունվեն, մենք պատրաստ ենք գնալու մինչեւ պերմանենտ գործադուլի»:

Մեսրոպ Հարությունյան («Հայաստանի Հանրապետություն») - ՁԼՄ-ների հայտարարության մեջ առաջադրված են տնտեսական խնդիրներ, որոնք մեկ օրվա լուծելու խնդիրներ չեն, հատկապես մամուլի նկատմամբ հարկային արտոնություններ մտցնելու առաջարկը օրենսդրական խնդիր է, եւ կառավարությունն այսօր իրավունք չունի հարկային արտոնություններ տալու ինչ-որ մեկին: Դա գոնե ինչ-որ ձեւով պետք է նպաստի նրան, որ խորհրդարանը հետագայում տնտեսական օրենսդրությունը մշակելիս, հավի առնի մամուլի կարիքները:

Իսկ ինչ վերաբերում է գլխավոր հարցին՝ մամուլի տարածմանն ու վաճառքին, քանի դեռ «Հայմամուլը» աշխատում է հին ձեւով ու սկզբունքներով, քանի դեռ այդ հզոր ցանցը [illegible] չի սովորել թերթ վաճառել, ապա այդ խնդիրը շատ դժվար կլինի լուծել: Պահանջները չբավարարելու դեպքում ես առաջարկում եմ բողոքի ակցիայի մի հետաքրքիր ձեւ՝ տպագրել յուրաքանչյուր թերթից հազարական օրինակ եւ հանված կրպակների տեղում թերթերի գլխավոր խմբագիրները կանգնեն ու վաճառեն դրանք:

ՁԼՄ-ների նախազգուշական գործադուլին առայժմ չմասնակցող «Առավոտ» թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը ներկայացրեց իրենց չմասնակցելու մի շարք պատճառաբանություններ. իր հետ ոչ ոք չի պայմանավորվել գործադուլի մասին, իրեն ոչ ոք հայտարարության տեքստ չի բերել ստորագրելու համար: Միայն այն, որ իր կամքը հաշվի չեն առել, արդեն բավական է վերոհիշյալ ակցիային չմիանալու համար: Նրա կարծիքով, իր կոլեգաները «երեւի ենթադրել են, որ եթե վերեւից ինչ-որ հրահանգ կա գործադուլ անելու, ինքը պետք է միանա»:

«Ես ենթադրում եմ, որ դա կազմակերպված է նոմենկլատուրայի մի մասի կողմից նոմենկլատուրայի մի այլ մասի դեմ: Որպես անկախ թերթ ես այդ խաղերին չես ուզում մասնակցել», ասաց պրն Աբրահամյանը, միեւնույն ժամանակ համաձայնվելով, որ ՁԼՄ-ների պահանջները ճիշտ են եւ ինքը միանում է այդ պահանջներին որպես թերթի խմբագիր, բայց այդ պահանջներին հասնելու ձեւը գործադուլը չի կարող լինել, որովհետեւ՝ «իշխանավորներին, որոնց դեմ ուղղված է ակցիան, շատ ձեռք կտա թերթերի լույս չտեսնելը. իշխանավորները երազում են դրա մասին»:

Ա Ժ-ի դեկտեմբերի 2-ի նիստում 102 «կողմ», 8 «դեմ» եւ 24 «ձեռնպահ» քվեարկության արդյունքներով առաջին ընթերցմամբ ընդունվեց գույքահարկի մասին ՀՀ օրենքի նախագիծը:

Այնուհետեւ ներկայացվեց 1996 թ. պետբյուջեի կատարողականը եւ դրա վերաբերյալ վերահսկիչ պալատի եզրակացությունը:

Ա Ժ ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը նկատեց, որ կատարողական ծախսերի կառուցվածքը չի համապատասխանում այն ծախսերի կառուցվածքին, որը սահմանվել է ի սկզբանե: 1996 թ. եղել է սպեցիֆիկ տնտեսության աճ, երբ դրամական զանգվածը կազմել է 37 տոկոս:

Լեոնիդ Հակոբյանը (ՀԿԿ) ընդգծեց, որ կատարողականի արդյունքում 37 միլիարդ դրամի խախտում է կատարվել եւ այդ խախտումը պետք է ընդունել ի գիտություն: Նա ավելացրեց, որ գերֆինանսավորված ճյուղեր կան, որը վկայում է, որ գերֆինանսավորվում են այն ճյուղերը, որոնց ղեկավարները կարողանում են փող տալով փող ուզել կառավարությունից: Ըստ Հակոբյանի, բեռաձին կառույցներն արդեն մտնում են պետբյուջեի եւ արտաստահմանյան վարկերի կառուցվածքների մեջ: Հակոբյանն առաջարկեց բյուջեի կատարողականի եւ 37 միլիարդ դրամի խախտման քաղաքական գնահատական տալ: Այսօրինակ իրավիճակը Հակոբյանը որակեց «խայտառակ» եւ համոզմունք հայտնեց, որ «այսօրվա կառավարությունը [illegible] չի սովորել թերթ վաճառել, ապա այդ խնդիրը շատ դժվար կլինի լուծել: Պահանջները չբավարարելու դեպքում ես առաջարկում եմ բողոքի ակցիայի մի հետաքրքիր ձեւ՝ տպագրել յուրաքանչյուր թերթից հազարական օրինակ եւ հանված կրպակների տեղում թերթերի գլխավոր խմբագիրները կանգնեն ու վաճառեն դրանք:

ՁԼՄ-ների նախազգուշական գործադուլին առայժմ չմասնակցող «Առավոտ» թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը ներկայացրեց իրենց չմասնակցելու մի շարք պատճառաբանություններ. իր հետ ոչ ոք չի պայմանավորվել գործադուլի մասին, իրեն ոչ ոք հայտարարության տեքստ չի բերել ստորագրելու համար: Միայն այն, որ իր կամքը հաշվի չեն առել, արդեն բավական է վերոհիշյալ ակցիային չմիանալու համար: Նրա կարծիքով, իր կոլեգաները «երեւի ենթադրել են, որ եթե վերեւից ինչ-որ հրահանգ կա գործադուլ անելու, ինքը պետք է միանա»:

«Ես ենթադրում եմ, որ դա կազմակերպված է նոմենկլատուրայի մի մասի կողմից նոմենկլատուրայի մի այլ մասի դեմ: Որպես անկախ թերթ ես այդ խաղերին չես ուզում մասնակցել», ասաց պրն Աբրահամյանը, միեւնույն ժամանակ համաձայնվելով, որ ՁԼՄ-ների պահանջները ճիշտ են եւ ինքը միանում է այդ պահանջներին որպես թերթի խմբագիր, բայց այդ պահանջներին հասնելու ձեւը գործադուլը չի կարող լինել, որովհետեւ՝ «իշխանավորներին, որոնց դեմ ուղղված է ակցիան, շատ ձեռք կտա թերթերի լույս չտեսնելը. իշխանավորները երազում են դրա մասին»:

Ընդհանրություն

Հայաստանի ուսանողության հանրապետական խորհրդի նախագահության խնդրանքով տպում ենք հետեւյալը.

Հայաստանի ուսանողությունն իր երախտիքի խոսքն է հղում «Հայ օգնության ֆոնդի» սենդի ծրագրերի գրասենյակին, հատկապես տնօրեն պրն Գ. Թաքուլյանին՝ ուսանողության անապահով շերտերի նկատմամբ հանդես բերած ուշադիր եւ հոգատար վերաբերմունքի, սենդիանքերի տեսքով հատկացվող մարդասիրական օգնության միջոցառումների պարբերական կազմակերպման համար:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Երկու բյուջե, երկուսն էլ տարբեր հասակի

ԱԺ-ն ի գիտություն ընդունեց 1996 թ. պետբյուջեի կատարողականը, ինչպես նաեւ 37 միլիարդ դրամի շեղումը

լատի եզրակացությունը:

Ա Ժ ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը նկատեց, որ կատարողական ծախսերի կառուցվածքը չի համապատասխանում այն ծախսերի կառուցվածքին, որը սահմանվել է ի սկզբանե: 1996 թ. եղել է սպեցիֆիկ տնտեսության աճ, երբ դրամական զանգվածը կազմել է 37 տոկոս:

Լեոնիդ Հակոբյանը (ՀԿԿ) ընդգծեց, որ կատարողականի արդյունքում 37 միլիարդ դրամի խախտում է կատարվել եւ այդ խախտումը պետք է ընդունել ի գիտություն: Նա ավելացրեց, որ գերֆինանսավորված ճյուղեր կան, որը վկայում է, որ գերֆինանսավորվում են այն ճյուղերը, որոնց ղեկավարները կարողանում են փող տալով փող ուզել կառավարությունից: Ըստ Հակոբյանի, բեռաձին կառույցներն արդեն մտնում են պետբյուջեի եւ արտաստահմանյան վարկերի կառուցվածքների մեջ: Հակոբյանն առաջարկեց բյուջեի կատարողականի եւ 37 միլիարդ դրամի խախտման քաղաքական գնահատական տալ: Այսօրինակ իրավիճակը Հակոբյանը որակեց «խայտառակ» եւ համոզմունք հայտնեց, որ «այսօրվա կառավարությունը [illegible] չի սովորել թերթ վաճառել, ապա այդ խնդիրը շատ դժվար կլինի լուծել: Պահանջները չբավարարելու դեպքում ես առաջարկում եմ բողոքի ակցիայի մի հետաքրքիր ձեւ՝ տպագրել յուրաքանչյուր թերթից հազարական օրինակ եւ հանված կրպակների տեղում թերթերի գլխավոր խմբագիրները կանգնեն ու վաճառեն դրանք:

Ա Ժ-ի հայտարարությունների ժամին Երջանիկ Աբգարյանն առաջարկեց խորհրդարանական լսումներ անցկացնել հայ-ռուսական հարաբերությունների շուրջ: Աբգարյանը դժգոհություն հայտնեց, որ որեւէ գնահատական չտրվեց ՌԴ-ի Պետդումայի այն որոշմանը, որով գոհունակություն էր հայտնվում Բելառուս-Ռուսաստան դաշինքին միանալու օգտին տրված ստորագրությունների հավաքմանը Հայաստանում: «Հայ ժողովուրդը պատմության մեջ առաջին անգամ ռուսական ախոռից դուրս է եկել եւ այդ ախոռը վերադառնալու ոչ մի մտադրություն չունի»:

Այսօր Ա Ժ-ում կսկսվի 1998 թ. բյուջեի նախագծի քննարկումը, որն ավարտին կմոտենա միայն արտահերթ նիստում:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Կոմունիստների առաջնորդը գոհ է համագումարից

Լրացնելով կոմկուսի 33-րդ հպմագումարի «բաց» օղակը կիրակի օրը չկայացած մամուլի ասուլիսը, երեկ Սերգեյ Բադալյանը հանդիպման էր հրավիրել լրագրողներին (եւ կոչ արեց ըմբռնում դրսեւորել, որ համագումարը «դուրս է եկել իր օրբիտայից»):

Համագումարում ընդունվեցին բանաձեւեր քաղաքական զեկուցման, Ռուսաստան-Բելառուս միությանը միանալու, Ղարաբաղի խնդրի կարգավորման վերաբերյալ. նաեւ՝ ուղղված հայ ժողովրդին, կատարվեցին կանոնադրական եւ ծրագրային փոփոխություններ. համագումարի «հունձը» ներկայացնելով, ասաց կոմկուսի ղեկավարը: Հաջողությունների շարքում պրն Բադալյանը նշեց «շատ եւ շատ կարեւոր զույգներ» Հայաստանի աշխարհաքաղաքական շահերին այս կամ այն կերպ առնչվող արտաքին գործերի նախարարների հանդիպումներ հրավիրելու նախագահի նախաձեռնությունը: Համագումարի առջեւ դրված բոլոր խնդիրները լուծվեցին, որոշումներն ընդունվեցին միաձայն, պատասխանատու խնդիր չկա: Ինչ վերաբերում է համագումարում հնչած «հնաոճ» ծափերին, ապա դրանք դասվիրված կամ պարտադրված չէին ինչպես նախկինում, այլ «էմոցիայի» արդյունք էին, ասաց նա:

Նորացված կոմկուսն իբրեւ արմատական, բայց եւ դասախոսական, ընդդիմություն, քաջ գիտակցում է իր տեղը, դերը եւ քաղաքական կյանքում եւ վերջին տասնամյակից տարիների գործունեությամբ ցնցվածքներ է իշխանության վերադառնալու ճանապարհին խոսելու բարոյական իրավունքը հավատացրեց կենտկոմի առաջին քարտուղարը՝ շեշտելով, որ իշխանություն վերցնելն իմաստավորված չէ, իրենք պարզապես «գործ են անում ի շահ հայ ժողովրդի»: Կոմկուսն, ըստ պրն Բադալյանի, մտադիր է շարունակել ժողովրդի ճակատագրի համար բախտորոշ լուրջ եւ կոնկրետ քաղաքականությունը Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցելու ուղղությամբ, որ համարում է իր գլխավոր խնդիրը, միության մեջ հատուկ կարգավիճակով ԼՂՀ ընդգրկվելը դիտելով որպես խնդրի կարգավորման բանալի: Անդրադառնալով Ղարաբաղին նվիրված հատուկ նիստի վերաբերյալ մամուլի արձանագրած պարտությանը, նա ասաց, որ արտաքին գործընկերները բյուրիմացաբար ենթադրել են, թե կոմկուսը Ղարաբաղի կարգավորման հարցում հայանպաստ բանաձեւի ակնկալիք ունի, մինչդեռ խոսքը հայ կոմունիստների հստակ դիրքորոշումը ներքին անգամ ներկայացնելն էր. («բյուրիմացությունը հարված է», ասաց նա):

Հարցերին պատասխանելով, կոմկուսի ղեկավարը վերահաստատեց, որ կոմկուսն ընդհանուր ոչինչ չունի «անընդհատ գլխարկ փոխող մարդկանց եւ կազմակերպությունների (ձախ ուժերի միության) հետ, նշեց, որ նախագահի հետ երկու ժամ տեւած հանդիպման ընթացքում ոչ Ղարաբաղի, ոչ էլ այլ հարցերում «իրար համոզելու» փորձ չի արվել: Նախագահին, այնուհանդերձ, ասվել է, որ Ղարաբաղի խնդրում «հիստերիկայի մատնվել» չի կարելի: Պարզվեց նաեւ, որ Հայաստանի կոմունիստները բշնամիներ չեն փնտրում եւ չունեն, ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները լուծելու քաղաքական ուժերը սպառված չեն համարում, բայց եւ համոզված են, որ «մեր համբերատար ժողովուրդը» թույլ չի տա չարաշահել իր համբերությունը: «Մոլորակի» թղթակցի առաջարկով պրն Բադալյանը մեկնաբանեց «վերջ» բառի իմաստը նաեւ կոմկուսի քառապաշարում տեղ գտած «պայքար մինչեւ վերջ» արտահայտության կոնտեքստում: «Լավ ասացիր, երեւի նկատի ունեիր, որ մեր գործունեությունները «պայքար, պայքար մինչեւ վերջ»-ից սկսվելու», ասաց նա՝ հավատացնելով, որ կոմունիստներ «վերջի» դասակարգային իմաստը նկատի չունեն, ընդհանրապես Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցելու ուղղությամբ, որ համարում է իր գլխավոր խնդիրը, միության մեջ հատուկ կարգավիճակով ԼՂՀ ընդգրկվելը դիտելով որպես խնդրի կարգավորման բանալի: Անդրադառնալով Ղարաբաղին նվիրված հատուկ նիստի վերաբերյալ մամուլի արձանագրած պարտությանը, նա ասաց, որ արտաքին գործընկերները բյուրիմացաբար ենթադրել են, թե կոմկուսը Ղարաբաղի կարգավորման հարցում հայանպաստ բանաձեւի ակնկալիք ունի, մինչդեռ խոսքը հայ կոմունիստների հստակ դիրքորոշումը ներքին անգամ ներկայացնելն էր. («բյուրիմացությունը հարված է», ասաց նա):

Հարցերին պատասխանելով, կոմկուսի ղեկավարը վերահաստատեց, որ կոմկուսն ընդհանուր ոչինչ չունի «անընդհատ գլխարկ փոխող մարդկանց եւ կազմակերպությունների (ձախ ուժերի միության) հետ, նշեց, որ նախագահի հետ երկու ժամ տեւած հանդիպման ընթացքում ոչ Ղարաբաղի, ոչ էլ այլ հարցերում «իրար համոզելու» փորձ չի արվել: Նախագահին, այնուհանդերձ, ասվել է, որ Ղարաբաղի խնդրում «հիստերիկայի մատնվել» չի կարելի: Պարզվեց նաեւ, որ Հայաստանի կոմունիստները բշնամիներ չեն փնտրում եւ չունեն, ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները լուծելու քաղաքական ուժերը սպառված չեն համարում, բայց եւ համոզված են, որ «մեր համբերատար ժողովուրդը» թույլ չի տա չարաշահել իր համբերությունը: «Մոլորակի» թղթակցի առաջարկով պրն Բադալյանը մեկնաբանեց «վերջ» բառի իմաստը նաեւ կոմկուսի քառապաշարում տեղ գտած «պայքար մինչեւ վերջ» արտահայտության կոնտեքստում: «Լավ ասացիր, երեւի նկատի ունեիր, որ մեր գործունեությունները «պայքար, պայքար մինչեւ վերջ»-ից սկսվելու», ասաց նա՝ հավատացնելով, որ կոմունիստներ «վերջի» դասակարգային իմաստը նկատի չունեն, ընդհանրապես

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ՝ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@armpoc.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍՅԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգչային շտաբագիծ «Ազգ» թերթ
Տղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊՄԲԱՑԻԿ

– Կոպենհագենում հնարավոր հետաքրքիր բայը ո՞րը պետք է լինի, որ ՀՀ իշխանությունները անեն:

– Գլխավորը մեզ համար, իհարկե, Ղարաբաղի հարցն է, միևնույն ժամանակ աչքաթող չանելով նաև մյուս հարցերը, որոնք անուղղակիորեն մեր դեմ կամ մեր օգտին կարող են լինել: Դրանք վերաբերում են Եվրոպայում սովորական սղաառազինությունների պայմանագրին, Հելսինկիի խարտիան փոխել-չփոխելուն: Հարց է դրվելու նաև կոնսենսուսով ընդունվող որոշումների կարգը փոխելու մասին: Բայց գլխավորը Ղարաբաղի հարցն է, պետք է փորձել, որ անցյալ տարվա արդյունքը չկրկնվի: Եթե ցանկացած որոշում առաջարկվի, որը չի համապատասխանում ՀՀ եւ ԼՂՀ շահերին, բնականաբար մեր կողմից վետոյի կենթարկվի:

– Իսկ այդ շահերն այսօր ո՞ւմնն են:

– Ըստ իս, համենայնդեպս Կոպենհագենի նախապատրաստական փուլում այո:

– Որո՞նք են այդ շահերը:

– Թերեւս դժվար է... շահ կոնկրետ վիպ դայչ համհնայնիոյ չդ... ուզում ենք հասնել այն արդյունքին, ինչն ընդունելի է ԼՂՀ-ին, շարունակել բանակցային գործընթացը, համաձայնվել որոշակի փաստաթղթի շուրջ...

– Փաթեթային լուծո՞ւմ, թե՞...

– Անկախ դրանից, այնպիսի լուծում, որն ընդունելի կլինի 3 կողմերին բանակցություններն սկսելու համար:

– Կարծիք կա, թե 3 կողմի համար ընդունելի տարբերակ էլի չի գտնվի: Այդ դեպքում ի՞նչ է սպասվում:

– Չեմ ասի կարծիք, այլ հավանականություն կա, եթե լինի այն տարբերակը, որ վետոյից հետո նախագահողը փորձի առաջարկել իր հայտարարությունը, ինչպես եղավ անցյալ տարի, պետք է պարզապես խուսափել նման ելքից: Գլխավորը, համանախագահները հաջ գիտակցում են, որ այն հայտարարությունը, ինչ եղավ Լիսաբոնում անցյալ տարի, խանգարեց բանակցային գործընթացին, եւ դա է պատճառը, որ 97-ին բանակցությունները չշարունակվեցին: Կարելի է՛ ենթադրել, որ այս տարի նրանք իրենք պետք է խուսափեն նման որեւէ կանխակալ հայտարարությունից եւ անեն ամեն ինչ, որ բանակցությունները շարունակվեն:

– Հայտնի է, որ Լիսաբոնը հայ դիվանագիտության պարտության, տկար քարոզչության հետեւանքն էր: Այս տարի աշխատանքի առավել արգասաբեր արդյունք կարո՞ղ ենք ակնկալել:

– Դժվարանում եմ ասել, թե վատ աշխատանքի արդյունք էր: Երկու մեկնաբանությունն էլ կա, թե մեծ հաղթանակ էր, որ հայ դիվանագետները վետոյի ենթարկեցին Լիսաբոնի փաթեթը եւ պարզապես ընդունվեց մի հայտարարություն, որը որեւէ առումով կողմերին չի դարտադրում: Կարելի է նաեւ մոտենալ այն տեսակետից, թե հարվածը կարողացան շեղել: Ճնշումը մեծ է, ԵԱՀԿ անդամների մեջ նույնպես տարաձայնություններ կան: ՄԱԿ-ում կայացած քվեարկությունը փայլուն ցույց տվեց, որ ԵԱՀԿ անդամներն իրենք իսկ աբսուրդ քվեարկություններ անելով՝ ինչ-որ տեղ չեն գիտակցում թերեւս, թե ինչին կողմ, ինչին դեմ են քվեարկում: Վիճակը ծանր է մինչեւ Կոպենհագեն, բայց պիտի փորձենք որ... չեմ ասում հաղթանակ, դրա մասին չի խոսվում, սանալ այնպիսի արդյունք, որն ընդունելի կլինի ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի համար: Նպատակը դա է:

– Հայաստանն ակնկալո՞ւմ է այդպիսի արդյունք Կոպենհագենից:

– Եթե գնում ես մենամարտի եւ հույս չունես հաղթանակի, պետք չէ գնալ: Եթե գնում ես նախապես գիտակցությամբ, թե դժվար է, ներկա վիճակը մեր օգտին չէ, բայց պարտվողական տրամադրությունն նախարարությունում ստեղծված մեր աշխատանքային խմբում չկա: Պիտի փորձենք անել լավագույնը:

– Կարո՞ղ է ԱԳՆ-ն ՀՀ նախագահից տարբեր կարծիք ունենալ, պաշտպանել:

– Չեմ կարծում: Եվ նախագահը, եւ ԱԳՆ-ն իրագործում են միեւնույն արտաքին քաղաքականությունը՝ մեկը մյուսին համալրելով, եւ սխալ կլինի կարծել, թե նախարարությունը կարող է հակառակ կարծիք ունենալ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ
Բոնն

ԳԵՐՄԱՆԻԱ

«Դերկա վիճակը մեր օգտին չէ, բայց պարտվողական տրամադրություն չկա»

Բոննում նոյեմբերի 29-ին տեղի ունեցած «Արցախը եւ սփյուռքահայության դերը» ձեռնարկմանը մասնակցում էր նաեւ ՀՀ ԱԳՆ ՄԱԿ-ի բաժնի վարիչ Վահրամ Կաժոյանը, որը դարաբաղյան հիմնախնդրով զբաղվող աշխատանքային խմբի անդամ է: Օգտվելով առիթից նրան դիմեցինք մի քանի հարցով:

մանագրին, Հելսինկիի խարտիան փոխել-չփոխելուն: Հարց է դրվելու նաեւ կոնսենսուսով ընդունվող որոշումների կարգը փոխելու մասին: Բայց գլխավորը Ղարաբաղի հարցն է, պետք է փորձել, որ անցյալ տարվա արդյունքը չկրկնվի: Եթե ցանկացած որոշում առաջարկվի, որը չի համապատասխանում ՀՀ եւ ԼՂՀ շահերին, բնականաբար մեր կողմից վետոյի կենթարկվի:

– Իսկ այդ շահերն այսօր ո՞ւմնն են:

– Ըստ իս, համենայնդեպս Կոպենհագենի նախապատրաստական փուլում այո:

– Որո՞նք են այդ շահերը:

– Թերեւս դժվար է... շահ կոնկրետ վիպ դայչ համհնայնիոյ չդ... ուզում ենք հասնել այն արդյունքին, ինչն ընդունելի է ԼՂՀ-ին, շարունակել բանակցային գործընթացը, համաձայնվել որոշակի փաստաթղթի շուրջ...

– Փաթեթային լուծո՞ւմ, թե՞...

– Անկախ դրանից, այնպիսի լուծում, որն ընդունելի կլինի 3 կողմերին բանակցություններն սկսելու համար:

– Կարծիք կա, թե 3 կողմի համար ընդունելի տարբերակ էլի չի գտնվի: Այդ դեպքում ի՞նչ է սպասվում:

– Չեմ ասի կարծիք, այլ հավանականություն կա, եթե լինի այն տարբերակը, որ վետոյից հետո նախագահողը փորձի առաջարկել իր հայտարարությունը, ինչպես եղավ անցյալ տարի, պետք է պարզապես խուսափել նման ելքից: Գլխավորը, համանախագահները հաջ գիտակցում են, որ այն հայտարարությունը, ինչ եղավ Լիսաբոնում անցյալ տարի, խանգարեց բանակցային գործընթացին, եւ դա է պատճառը, որ 97-ին բանակցությունները չշարունակվեցին: Կարելի է՛ ենթադրել, որ այս տարի նրանք իրենք պետք է խուսափեն նման որեւէ կանխակալ հայտարարությունից եւ անեն ամեն ինչ, որ բանակցությունները շարունակվեն:

– Հայտնի է, որ Լիսաբոնը հայ դիվանագիտության պարտության, տկար քարոզչության հետեւանքն էր: Այս տարի աշխատանքի առավել արգասաբեր արդյունք կարո՞ղ ենք ակնկալել:

– Դժվարանում եմ ասել, թե վատ աշխատանքի արդյունք էր: Երկու մեկնաբանությունն էլ կա, թե մեծ հաղթանակ էր, որ հայ դիվանագետները վետոյի ենթարկեցին Լիսաբոնի փաթեթը եւ պարզապես ընդունվեց մի հայտարարություն, որը որեւէ առումով կողմերին չի պարտադրում: Կարելի է նաեւ մոտենալ այն տեսակետից, թե հարվածը կարողացան շեղել: Ճնշումը մեծ է, ԵԱՀԿ անդամների մեջ նույնպես տարաձայնություններ կան: ՄԱԿ-ում կայացած քվեարկությունը փայլուն ցույց տվեց, որ ԵԱՀԿ անդամներն իրենք իսկ աբսուրդ քվեարկություններ անելով՝ ինչ-որ տեղ չեն գիտակցում թերեւս, թե ինչին կողմ, ինչին դեմ են քվեարկում: Վիճակը ծանր է մինչեւ Կոպենհագեն, բայց պիտի փորձենք որ... չեմ ասում հաղթանակ, դրա մասին չի խոսվում, սանալ այնպիսի արդյունք, որն ընդունելի կլինի ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի համար: Նպատակը դա է:

– Հայաստանն ակնկալո՞ւմ է այդպիսի արդյունք Կոպենհագենից:

– Եթե գնում ես մենամարտի եւ հույս չունես հաղթանակի, պետք չէ գնալ: Եթե գնում ես նախապես գիտակցությամբ, թե դժվար է, ներկա վիճակը մեր օգտին չէ, բայց պարտվողական տրամադրություն չկա: Դերկա վիճակը մեր օգտին չէ, բայց պարտվողական տրամադրություն չկա: Պիտի փորձենք անել լավագույնը:

– Կարո՞ղ է ԱԳՆ-ն ՀՀ նախագահից տարբեր կարծիք ունենալ, պաշտպանել:

– Չեմ կարծում: Եվ նախագահը, եւ ԱԳՆ-ն իրագործում են միեւնույն արտաքին քաղաքականությունը՝ մեկը մյուսին համալրելով, եւ սխալ կլինի կարծել, թե նախարարությունը կարող է հակառակ կարծիք ունենալ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ
Բոնն

ՍԱՍՈՒԼ

Լրագրական ընտանիքի նորեկը

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի ժուռնալիստի տանը տեղի ունեցավ հայ լրագրական ընտանիքի նորեկի՝ Հայաստանի սոցիալիստական կուսակցության «Հասկ» պարբերաթերթի շնորհանդեսը:

ՀԺՄ նախագահ Ասողիկ Գեւորգյանի ողջերթի խոսքից հետո նոր թերթի հիմնադիր-հրատարակիչ, Հայաստանի սոցկուսի նախագահ Մովսես Շահվերդյանը եւ «Հասկի» գլխավոր խմբագիր Ստեփան Պողոսյանը համառոտակի ներկայացրին այս նոր պարբերականի առաջին 9-ը համարները, պատասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին: Պրն Շահվերդյանը հավատաց, որ թեկուզեւ կուսակցական պարբերաթերթ՝ «Հասկը» վեր է կանգնելու «կուսակցական նեղմտությունից»՝ բավարարվելով առավելագույնը 1 էջ կուսակցական նյութեր հրապարակելով, իսկ գործունեության մեջ շեշտը դնելու է ազգային արժեքների ու շահերի պաշտպանության վրա, որը նաեւ սոցկուսի գլխավոր խնդիրներից է:

«Ազգը» ողջունում է «Հասկ» եռօրյայի մուտքը հայ լրագրական ընտանիք եւ բարեմաղթում բեղմնավոր գործունեություն:

Օրինականությանը՝ հրապարակայնություն

Լույս է տեսել ՀՀ դատախազության «Օրինականություն» եռամսյա տեղեկագրի առաջին համարը (գլխավոր խմբագիր՝ Գուրգեն Ամբարյան): Այսպիսի մի պարբերականը նորույթ է եւ՛ մեր դատախազական համակարգի, եւ՛ հասարակական կյանքի համար: Տեղեկագրական հրատարակության փաստը գալիս է հավաստելու, որ ՀՀ դատախազությունը որդեգրել է իր գործունեության առավելագույն հրապարակայնություն ապահովելու խրախուսելի կեցվածք:

Տեղեկագիրը բացվում է հանրապետության գլխավոր դատախազին «արդարադատության պետական խորհրդականի» բարձրագույն դասային կոչում շնորհելու մասին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով եւ իր իսկ՝ գլխավոր դատախազի «Ուժեղ դատախազությունը իրավական պետության ձեւավորման հիմքն է» ծրագրային հոդվածով: Այնուհետեւ տպագրված են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, իրավագիտության թեկնածու Արմեն Խաչատրյանի եւ Մյասնիկյանի տարածքային դատախազ, իրավագիտության թեկնածու Վահրամ Շահինյանի՝ դատախազական գործունեության տարբեր խնդիրներին նվիրված հոդվածները, տեղեկագրական նյութեր ՀՀ դատախազության կոլեգիայում քննարկված հարցերի եւ ընդունած որոշումների մասին, բնության պահպանության եւ տնտեսական գործունեության բնագավառին նվիրված հոդվածներ, դատախազներին ու քննիչներին օգնելու նպատակով հրապարակված նյութեր: Տեղեկագիրը պարունակում է նաեւ «31-ի» հայտնի գործով պետական մեղադրյալի ճառի առաջին մասը, դատախազական համակարգի կադրային հրահանգումների տվյալները:



ՀՀ դատախազության «Օրինականություն» տեղեկագիրը հրապարակվել է ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի երեւանյան գրասենյակի (Թոմաս Բիրաբ) եւ ժողովրդավարության ու մարդու իրավունքների կենտրոնի (Վլ. Կարմիրշալյան) աջակցությամբ:

«Առաքելություն Հայաստան»-ը օգնում է հաղթահարելու աղագայի վախը

«Առաքելություն Հայաստան» բարեգործական միությունը սկսել է գործել 1992-ից, եւ բացառիկ դասախանասվություն է վերցրել՝ խնամելով անկողնային եւ միայնակ ծերերին: Միության նախագահ Հռիփսիմե Կիրակոսյանը, լինելով դարաբաղյան շարժման ընթացքում ոչ անհայտ Մերգելյանի անվան ինստիտուտի աշխատակիցներից, փորձեց հետերկրաշարժյան խառնաշփոթի, որի նկատմամբ առաջնային ուշադրության, ապա՝ վերահսկողության մթնոլորտում ձեռք մեկնել հասկացես նրանց, ովքեր ուշադրությունից դուրս էին մնացել: Սոցիալական աղետների նախարարությունում, հաղորդի փոստատներում, պոլիկլինիկաներում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա ստեղծվեց տվյալների բանկ: Միությունը ծրագրել էր իրականացնել միայն բուժսպասարկում, սակայն խնամակալների վիճակը ստիպում էր տեղեկացնել բաշխող կազմակերպություններին ծերերի մասին, երբեմն երբեմն նրանց միջոցով սննդամթերք, տաքացնող սարքեր հասկացնել, օգնել ստանալ մարդասիրական օգնությունը: Խիստ դժվար էր հասկանալ 92–93 թթ.-ին, երբ անկողնային հիվանդներին լողացնելու, խոհանոցը կարգի բերելու համար դույլերով ջուր էին բարձրացնում 14–15-րդ հարկեր, հիմա էլ նոր խոչընդոտներ են առաջ եկել: Ծերունիները խուսափում են շատ բանկ էլեկտրաէներգիան օգտագործել եւ նույնը բույլ չեն տալիս խնամողներին: Վիճակագրության համաձայն ծերերի հիվանդությունը վեց անգամ բարձր է: Կան բնորոշ ծերունական հիվանդություններ, եւ ըստ այդմ ընտրվում է բժշկական անձնակազմը: Ներկայումս միության մեջ ընդգրկված արհեստավարժ բժիշկների շարքում կան թերապեւտ, նեվրոպաթոլոգ, վիրաբույժ: Նախկինում ունեցել են նաեւ ակնաբույժ, մաշկային բժիշկ: Միության աշխատանքների մասին պատմող տեսաերիզը նայելիս արդեն պարզ է դառնում, թե ինչ դժվարին աշխատանքի է ձեռք զարկել այս խումբը: Տկն Կիրակոսյանի կարծիքով, գլխավոր ձեռքբերումն այն է, որ խնամքի կարոտ այդ մարդկանց կարողացան բարձրացնել արժանապատիվ վիճակի: Երբ այլեւս չի բավարարում զուտ ֆիզիկական գոյությունը եւ ուզում են հաղորդակցվել մարդկանց, Աստծո հետ: Նրանց կողքին ապրողները, որ խուսափում էին նույնիսկ բարեգթությունից դրդված մտնել աղտոտ այդ բնակարանները, հիմա այցելում են միայնակ ծերունիներին: Երբեմն նրանց կացարանները վերածվում են հավաքատեղիի: Սակայն միության առաքելությունը երբեմն հակառակ կերպ է ընկալվում: Հարեւաններին եւ ավելի հաճախ ծերունիների հարազատներին այս այցելությունները թվում են շահադիտական հետապնդում բնակարանին, սեփականությանը տիրելու նպատակ ունեցող: Մարդիկ, որ ընդամենը գրանցված են ծերունիների բնակարաններում, բազմաթիվ խոչընդոտներ են հարուցում: Բայց միության վեցամյա գործունեությունն ապացուցում է, որ նման նկրտումներ չկան: Նույնիսկ տարբեր մարդկանց դիմումները, որոնք կացարանի կարիք ունեն եւ պատրաստ են խնամել ծերունիների, մերժվում են, որովհետեւ դա անկանխատեսելի հետեւանքներով է հղի: Տկն Կիրակոսյանն իրավամբ հորատանում է, որ իրենց օգնությունը շատերին է փրկել 92–93 թթ. դաժան ձմեռներից:

Հանրապետությունում խնամքի կարիք ունեցողների թիվը հասնում է մոտ 3000-ի: Ներկայումս նրանցով զբաղվում են Երեւանի կենսաթոշակառուների սպասարկման կենտրոնը, Հայկական կարմիր խաչի ընկերությունը, ուսանողական ջոկատների հանրապետական շտաբի վարչությունը (Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան): «Առաքելություն Հայաստան»-ը միակ ոչ պետական կառույցն է, որ միացած է այս խմբին: ՀՀ կառավարության 97 թ. նոյեմբերի 4-ի որոշման համաձայն միությունը պաշտոնապես ընդգրկվել է «Միայնակ տարեցների եւ հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու ծրագիրը» կատարողների շարքում: Այն իրականացվելու է երեք փուլով: 1998-ից Երեւանում կստեղծվեն 2000 կենսաթոշակառուներ, 1999-ից ծրագիրը կընդգրկի 10 քաղաքներ, 2000 թ.-ից՝ հանրապետության մնացած քաղաքներն ու գյուղերը: Ծառայությունների շարքում են դասվում կենցաղային սպասարկումը (գնումներ, ստացված մարդասիրական օգնության տեղափոխում, վարձավճարների մուծում), իրավաբանական խորհրդատվությունը, բժշկական եւ սոցիալ-հոգեբանական օգնությունը: Բժշկական օգնության սահմաններում ծրագիրը (որով ցայսօր զբաղվել է «Առաքելություն Հայաստան»-ը) դասում է առաջին բուժօգնությունը, անհրաժեշտ դեղամիջոցներով եւ հիգիենիկ պարագաներով ապահովումը, առողջարաններ, հանգստյան տներ ուղեգրերի ձեռքբերման, ինչպես եւ բուժկանխարգելիչ հաստատություններում տեղավորելու գործում աջակցությունը: Վերջինս միության աշխատանքի ամենացավոտ խնդիրն է, որովհետեւ հիվանդանոցները չվճարված պետպատվերի պատճառով հրաժարվում են ընդունել այդ խավին: Խնամարկյալներին ստացիոնար բուժում տալու հարցում երբեմն օգնում են միության աշխատակիցները, որոնք զուգահեռաբար աշխատում են հիվանդանոցներում: Նման հիվանդներն ունեն մշտական խնամողի կարիք, որի հնարավորությունը «Առաքելություն Հայաստան»-ը չունի, բայց հուսով է, որ վերոհիշյալ ծրագրի գործարկումից հետո համապատասխան հաստատություններ կարվեն կամ կստեղծվի սահմանափակ շարժունակությամբ ծերունիներին սպասարկող հատուկ բուժհաստատություն: Միությունը պրոֆեսիոնալ մասնագետների մի կառույց է եւ խնամքի ու բուժսպասարկման մնացյալ աշխատանքները կատարում է անհրաժեշտ որակով, սակայն չունի բոլոր հարցերին պատասխանող թիմ: «Առաքելություն Հայաստան»-ն այժմ սպասարկում է 900 հիվանդի: Այդ թիվը փոփոխվում է՝ կախված հնարավորություններից: Խնամառուները, ըստ ինքնասպասարկման, շարժողական ընդունակությունների սահմանափակման դասակարգված են հինգ խմբի: «Առաքելություն Հայաստան»-ը դիմումներ է ստանում ավելի երիտասարդ հաշմանդամներից, եւ նպատակադրված է նոր միջոցներ ձեռք բերել, նրանց իր խնամառության տակ առնելու համար: Բարեգործական միության միջոցները ձեռք են բերվում միջազգային կազմակերպություններից, սակայն, չնայած նրանց հաջողմանը, այս եղանակը հարատեւ չէ: Միությունը պետական հոգածության կարիք ունեցողների բուժսպասարկումն ու խնամքն է իրականացնում, եւ, արդեն իսկ պետական հովանավորության կարիքը կա:

1999-ը ՄԱԿ-ի կողմից սահմանված է ծերերի տարի: Պատրաստվում է նոր ծրագիր, որտեղ խոսվում է նոր ոգզմավարության, աշխատանքները հնարաքանությունով մեկ ընդլայնելու, տարեցների համար հանդիպավայրեր ստեղծելու մասին, որը կօգնի ավելի շատ մարդկանց ձերբազատվել աղագայի նկատմամբ վախից:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱԶԳ. **ազգային**

ԵՐՈՒՍԱՂԵՄ

«Պատրիարքարանի բաժինը պէտք էր ըլլար առիւծի մասը», կ'ըսէ Շահէ արք. Աճեմեանը

Նախորդ համարում տպագրեցինք Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովից բխած հաղորդագրությունը, այդ առթիվ «Արմենիոն Միրոր Սփեթեյթըր» անգլիատառ շաբաթաթերթի խմբագրականը, ինչպես նաեւ Երուսաղեմի միաբանության անդամ, Հայաստանում ՀՕՖ-ի պատասխանատու Վիգեն եպս. Այվազյանի հետ լրագրող Համո Մոսկոֆյանի զրույցը նշյալ ժողովի արդյունքների, մասնավորաբար վերջերս սփյուռքահայ եւ օտար մամուլում լայնորեն արծարծված Իսրայելում հայապատկան 3 կալվածքների երկարաժամկետ վարձակալման մասին: Հաղորդագրությունը, ինչպես եւ Վիգեն Սրբազանը, անդրադարձել էր նաեւ պատրիարքարանին պատկանող 15 այլ կալվածքների նախապես վարձակալման պայմանագրերը վերանայելու կամ ուղղելու որոշման մասին: Նկատի առնելով, որ նախկին այդ պայմանագրերի կնքման գործում մինչեւ 1980 թ. կարեւոր մասնակցություն է ունեցել հանգուցյալ Եղիշե պատրիարք Տերտերյանի գործակից եւ Երուսաղեմի պատրիարքարանի այն ժամանակվա դիվանապետ Շահե արք. Աճեմյանը, լրագրող Համո Մոսկոֆյանը եղավ վերջինիս ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկանի մոտ զրույցի: Ծանոթանանք Սրբազանի լուսաբանություններին:

– Չեմ ուզեր Երուսաղէմի վերաբերեալ որեւէ հարցով բանավէճի մէջ մտնել որեւէ մեկուն հետ: Մինչեւ հիմա բաւական բան հրատարակուեցաւ թերթերուն մէջ: Ինչ կը վերաբերի Երուսաղէմի Պատրիարքութեան վերջերս կատարած կալուածային երեք մեծ գործառնութիւններուն, ինչ որ գրուեցաւ մինչեւ հիմա ինձի համար շատ պարզ եւ յստակ է, որովհետեւ ես քաջատեղեակ եմ, թէ Իսրայէլի մէջ նման գործարքները կրօնական հաստատութիւններու հետ ինչպէս կը կատարուին եւ ինչ կ'արժեն յաջո՞ղ են, թէ անյաջող: Թող միաբանական պատկառելի ժողովը, որ որոշումներ կ'առնէ առանց բան մը հասկնալու այդ հարցերէն, ինք ստանձնէ պատասխանատուութիւնը դատելու, նշելու եւ տեսնելու, թէ եղածը ի՞նչ կ'արժէ: Սակայն ես կը կարծեմ, թէ հիմա, երբ կ'իմանանք, թէ նոր յանձնախումբ մը կազմուած է հին մարդերով, որոնք պիտի փնտռեն ու փնտռտեն նորընտիր մեծ Պատրիարքին եւ իր օգնական Յուսիկ եպիսկոպոսի ձեռքով եղածներն ու չեղածները, համբերենք եւ տեսնենք, թէ ի՞նչ պիտի ընեն: Կը լսեմ, թէ պիտի նային նաեւ, թէ նախկին գործառնութիւնները ինչպէս եղած են: Նախկին գործառնութիւններու ժամանակ ես պաշտօն ունէի Երուսաղէմ եւ գրեթէ թէ ոչ եղած է: Այս ատեն երջանկայիշատակ Վազգէն կաթողիկոս պատկառելի յանձնախումբ մը դրկած էր Երուսաղէմ, գլխաւորութեամբ լուսահոգի Սերովբէ Արք. Մանուկեանի: Անոնք շատ մանրամասն փնտռեցին բոլոր կատարուած գործառնութիւններու համաձայնագիրները, փնտռեցին, թէ ինչ կալուածներ վարձակալութեան համար տրուած էին 99 տարուան համար, ինչ պայմաններով եղած էր ատիկա եւ թէ նպաստաւո՞ր, թէ՞ անպիտան էր Երուսաղէմի համար: Երբ այս նորելուկները ամբողջացնեն իրենց փնտռտուքները, այն ատեն ես կ'ունենամ ըսելու խօսք: Այս հանգրուանին կը կարծեմ, թէ նախկին գործառնութիւններու մասին խօսքը ըսուած է արդեն, ըսուած է կաթողիկոսական հեղինակութեամբ նշանակուած յանձնախումբի մը կողմէ եւ ունի իր կշիռը, վաւերականութիւնը եւ հոն, այդ տեղեկագիրը, կ'ընդգրկէ բոլոր փաստաթուղթերը: Թող Սրբոց Յակոբեանց մեր պատուարժան միաբանութիւնը եւ մանաւանդ իր փորձառու անդամները նստին եւ վերանայեն ինչ որ փնտռուած է արդեն: Ես հիմա միայն հանդարտ սիրտով կը նայիմ այդ թատերգութեան:



– Իսկ ի՞նչ է ձեր կարծիքը Եաֆայի վանքին շուրջ կատարուած գործարքներուն մասին:

– Այս մասին տամ մի քանի տեղեկութիւններ: Դարերով, խաչակիրներուն շրջանէն (11-րդ դարէն) մինչեւ անցեալ դարու վերջը, Եաֆայի վանքը ծառայած է որպէս ուխտաւորներու ընդունարան: Կը գտնուի ճիշտ Եաֆայի ծովեզերքին վրայ, ուր նաւերը հազարաւոր ուխտաւորներ կը բերէին Թուրքիայէն, այսինքն Արեւմտեան, ինչպես նաեւ Արեւելեան Հայաստանէն, մինչեւ Շուշիէն ու Կիլիկիայէն: Սուրբ Նիկողայոս վանքը առաջին տեղն էր, ուր կը մտնէին ուխտաւորները: Այդ վանքը թէ հնութեամբ կարեւոր է, թէ իր դիրքով: Ճիշտ նաւահանգիստին մուտքին է, ծովուն եզերքը: Այնտեղ եկեղեցին փոքրիկ, բայց շատ գեղեցիկ է: Կայ վանքը, այսինքն ուխտաւորաց բնակարաններու յատուկ տեղերը, ճաշարանը, հին դարերուն կար նաեւ ձիերը պահելու յատուկ ախոռ մը:

Վանքը, Նաթոլէոն Բոնափարթի բանակին եգիպտոսի արշաւանքն ճաշուելու ժամանակ ծառայեց որպէս ֆրանսական բանակի հիւանդանոց: Դելֆրուա նշանաւոր նկարիչին նկարներն մէկուն մէջ կ'երեւի անիկա: Այդ նկարը այսօր Լուվրի թանգարանին մէջ է: Հետեւաբար պատմական յուշարձան մըն է ան, կառուցուած այն տեղին վրայ, ուրկէ սուրբ Պետրոս Առաքեալը փախցուեցաւ բանտէն: Անոր համար է, որ Հայ առաքելական եկեղեցին, Յոյն-Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիները ունին երեք վանքեր նոյն վայրը, որոնք նոյն նպատակին ծառայած են: Այսօր հոն կայ Սուրբ Պետրոս լատիններու շատ գեղեցիկ վանքը, որ մեր վանքին դէմն է եւ ծովուն կապուած է: Նաեւ Յոյներուն վանքը, որ նոյնպէս նաւահանգիստին մուտքին, ծովուն եզերքն է, հին ժամանակուան նաւերուն խարսխման տեղը: Հետեւաբար Սուրբ Նիկողայոսը շատ հին կառոյց մըն է: 1948 թ-ին, Իսրայէլի անկախութեան հռչակումէն ետք, հրէական կառավարութիւնը պետական վերահսկողութեան տակ առած էր բոլոր համայնքներուն հողերը, որպէս բացակայ հաղթանակներու կալուածներ: Հայկական 22 կալուած կար գրաւուած Եաֆայի մէջ հրէական կառավարութեան կողմէ: 1962-63 թթ.-ուն Եղիշէ պատրիարքին հետ մենք ներկայացանք վարչապետ Բէն Գուրիոնին (որ, ի դէպ, Գրիգոր Զոհրապին դասընկերը եղած է եւ թուրքական հրեայ է), ներկայացուցինք հայկական կալուածներուն ցուցակը, խնդրելով վերադարձնել զանոնք: Ժամի-տով պատասխանեց, որ եթէ այդ էր հարցը, առանց հարցնելու կը ստորագրէր...: 24 ժամուան մէջ բոլոր կալուածները ետ առինք եւ մեր փաստաբանները գացին եւ պէտք եղած ձեւակերպութիւնները ըրին: Այդ կալուածները մնան հայոց կալուածներու ցուցակին մէջ: Անոնցմէ ոմանք ամբողջապէս փլատակ էին: Այն ատեն, խոշոր հաստուցումով, պատրիարքարանը 99 տարուան համար վարձու տուաւ զանոնք Հին Եաֆայի վերակազմակերպման ընկերութեան: Անոնք փլատակներ էին, որոնք ոչ մէկ առեւտրական արժէք կը ներկայացնէին: Սակայն վանքը մնաց ինչպէս էր, նաեւ այնտեղի համայնքին եկեղեցին ու դպրոցը: Կազմակերպուեցան հայերէնի դասեր: Պատարագները կ'ընթանան շաբաթ օրը, քանի որ Իսրայէլի մէջ ուխտատանները կանգ կ'առնեն շաբաթ օրերը:

Այսպէս մնաց մինչեւ 1970-ական թթ-ը: Այն ատեն Թել-Ավիվի քաղաքապետարանը, որուն իշխանութեան տակ էր Եաֆան, սկսաւ Թել-Ավիվէն մինչեւ Եաֆա ծովեզերքը վերակառուցել եւ շինարարութիւն ձեռնարկել: Հսկայ ծրագիրներ եղան, մեծ պանդոկներ շինուեցան եւ այդ ծրագիրը հասաւ մինչեւ մեր վանքի դուռը: Չէր կարելի աւերակ վիճակին մէջ պահել զայն: Համաձայնեցանք քաղաքապետարանին հետ, որպէսզի յարակից հողաբերը վերածուի տուրիստական մեծ կեդրոնի, մեծ ճաշարանով, փոքր հիւրանոց մը, սակայն առանց դիպչելու հին կառոյցին: Պիտի կառուցուէր կամուրջ մը վանքէն մինչեւ ծով (փողոցին վրայէն), որուն տեսարանը պիտի ընդգրկէր ամբողջ Թել-Ավիվը:

Այդ թուականներուն, նոյն Թորգոմականները եւ Տիրանականները, Ամերիկայէն վլվլուկ մը փրցուցին, դրամ դրկեցին տեղւոյն որոշ հայերուն, «ասոսիացիա» մը կազմեցին «պաշտպանելու» համար հայոց վանքը: Երբ այդպիսի աղմուկ բարձրացաւ, Եղիշէ Պատրիարքը հրաժարեցաւ ծրագիրէն: Իսկ հիմա, որ տրուեցաւ այդ նոյն կալուածը 99 տարուան համար, ծիծաղելի պայմաններով, ի՞նչ պիտի ըսենք, բացի մի բանէ՝ կը ցաւինք:

Հետեւաբար, պէտք է խնայել, որ քննադատելը շատ դիւրին է, սեղծելու արուեստն է դժուարը, ինչպէս կ'ըսեն ֆրանսացիները: Լաւ գործ ընելը դժուար է, մանաւանդ հրեաներուն հետ: Այդ բոլոր ծրագիրները, որոնք իրագործուեցան Եղիշէ Պատրիարքին օրով, ինչպէս վերաշինութիւնն ու էնֆերու կառուցումը, ուրախ պիտի ըլլայի, եթէ նոյն պայմաններով եղած ըլլային այս տարիներուն եղածները: Սկզբունքին մասին ըսելիք չունիմ: Կալուածները չեն կրնար 100 տարի նոյնը մնալ: Պէտք է շահագործուին: Սակայն շահագործումի պարագային պէտք է Պատրիարքարանին բաժինը առիւծի բաժինը ըլլայ եւ ոչ թէ անյայտ քանի մը վաճառականներու ձեռքը խաղալիք դառնայ:

Մինչեւ այսօր Թորգոմ Պատրիարքը իր ծախողութիւնները պարտկելու համար ուրիշները կ'ամբաստանէր: Այսօր ինքն է խնդրոյ առարկայ, միայն ինքը: Միաբաններու հաւաքի մը գրութիւններ ստորագրել տալով եւ անոնց ետեւ պահուըտելով, ինչպէս անցեալին, այսօր եւս միայն ու միայն ծիծաղելի պիտի ըլլայ:

Գրի առաւ
ՀԱՄՕ ՄՈՍԿՈՖԵԱՆԸ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ

Համագործակցում են Ռումինիայի եւ Հունգարիայի հայ համայնքները

Միեւնոյն տարածաշրջանի՝ տարբեր երկրների հայ համայնքների համագործակցության եւ այն որակական նոր մակարդակ փոխադրելու ինքնատիպ նախաձեռնություն են ցուցաբերել Ռումինիայի եւ Հունգարիայի հայ համայնքները:

Ինչպես տեղեկացնում է Բուխարեստում լույս տեսնող «Նոր կյանք» ամսաթերթը, Ռումինիայի Կեռլա քաղաքում կայացել է «Ռումինիայի հայոց միության» եւ «Հունգարիայի հայ փոքրամասնության ինքնավարություն» համայնքների ներկայացուցիչների հանդիպում:

Ռումինահայ պատվիրակությունը գլխավորում էր Ռումինիայի խորհրդարանի անդամ, ՌՀՄ-ի փոխնախագահ Վարուժան Փամպուքչյանը, Հունգարիայինը՝ ՀՀՓ-ի նախագահ Ալեխս Ավանեսյանը:

Հանդիպման եւ բանակցությունների արդյունքում ստորագրվել է երկու երկրների հայ համայնքների համագործակցության պայմանագիր, որի համար հիմք են ծառայել վերջին տարիների միջազգային եւ եվրոպական կազմակերպությունների կողմից ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ընդունված եւ վավերացված փաստաթղթերը:

Պայմանագրի համաձայն, երկու երկրների հայ համայնքները նախատեսում են սերտորեն համագործակցել՝ քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, տեղեկատվության, հոգեւոր ժառանգության, ավանդույթների, ազգային նկարագրի պահպանման ու զարգացման, հայապահպանության այլ խնդիրները համատեղ լուծելու բնագավառներում: Համատեղ ջանքերով նպաստել սփյուռքահայության համախմբմանը՝ համահայկական խնդիրների շուրջ, նպաստել սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

Երկու կողմերը պարտավորվում են հարգել հավասարության սկզբունքը, չմիջամտել միմյանց ներքին գործերին, իսկ ընդհանրության մեջ իրենց ներդրումը ունենալ երկու հարեւան երկրների եւ ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործում:

Ուշագրավ է, որ իրենց գործունեությունը պետք է ունենա անկուսակցական բնույթ, իրագործվի ընդհանուր ծեւով եւ կողմերից որեւէ մեկի իրավունքները ոտնահարվելու դեպքում ցուցաբերվի օրինական աջակցություն:

Պայմանագիրը բաց է նաեւ այլ երկրների հայ համայնքների համար, եթե նրանք տվյալ երկրում ճանաչված են որպես հայ փոքրամասնություն, իսկ նոր անդամների ընտրությունը կատարվում է երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Պայմանագիրը ստորագրել են Վարուժան Փամպուքչյանը եւ Ալեխս Ավանեսյանը՝ պայմանավորվելով տարին մեկ անգամ հրավիրել համատեղ ժողով՝ Ռումինիայի Կեռլա քաղաքում:

Վերոհիշյալ պայմանագրի ստորագրումը ուշագրավ իրադարձություն է ոչ միայն այդ երկու երկրների համայնքների, այլեւ սփյուռքի կյանքում, քանի որ գործնական քայլ է արվել երկու երկրների հայ համայնքների փոխհարաբերությունները եւ համագործակցությունը դնելու իրավական հիմքերի վրա: Ավելորդ է նշել, որ դա ամենատարբեր բնագավառներում լավ նախադայմաններ է ստեղծում եւ հեռանկարներ բացում երկու երկրների համայնքների ներկայացուցիչների փոխշահավետ համագործակցության համար:

Նման պայմանագրի կյանքի կոչելը հնարավոր դարձավ առաջին հերթին շնորհիվ այն բանի, որ երկու երկրների հայ համայնքներն ունեն մեկ միասնական, ներկայացուցչական ղեկավար մարմիններ, որոնք անհրաժեշտ լիազորություններ ունեն ներկայացնելու տեղի հայությանը ինչպես իրենց երկրներում, այնպես էլ մասնակցել նման հանդիպումների, կնքել պայմանագրեր, հանդես գալ այլ նախաձեռնություններով:

Երկու համայնքների մերձեցումը համահունչ է սփյուռքի կյանքում տեղի ունեցող կազմակերպչական գործընթացներին, ինչպես իրենց երկրներում միասնական ներկայացուցչական կառույցների ստեղծման, այնպես էլ փոխհամագործակցության բնագավառներում:

Առանձնապես կարեւոր է, որ նման միջոցառումներ կայանում են Արեւելյան Եվրոպայի երբեմնի հարուստ ավանդույթներ ունեցող երկրներում, որտեղ վերջին տարիներին մեծ աշխատանք է տարվում հայ համայնքները կազմակերպելու եւ ավանդույթները վերականգնելու ուղղությամբ: Հուսով ենք, որ այդ պայմանագրին միանալու ցանկություն կունենան հաստատապես տարածաշրջանի երկրների հայ համայնքները, ինչը հնարավորություն կընձեռի նրանց առավել նպաստակային կազմակերպել եւ լուծել հայապահպանության կարեւոր խնդիրները:

Պատրաստեց՝ ՅԻՎԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԸ
Սփյուռքահայության հետ կապերի կոմիտեի
նախագահի պաշտոնակատար

ԱԶԳ

Միջազգային

Կարելի է ասել, որ «սառը պատերազմի» ավարտից հետո ամերիկյան նոր դիվանագիտությունը հիշեցնում է կովբոյական ֆիլմերի սյուժեները: Այս օրերին Իրաքը դարձել է ԱՄՆ-ի վայրի արևմուտքը, իսկ Բիլ Քլինթոնը՝ դրա շերիֆը: Նա աշխարհի երկրներին կոչ է անում նոր ճակատամարտ սկսել ընդհանուր թշնամու՝ Սադդամ Հուսեյնի դեմ: Եթե ամեն ինչ ընթանա ֆիլմերի համաձայն, 1990 թ. «Անապատի փոթորիկ» գործողության ժամանակ ԱՄՆ-ի շուրջը համախմբված երկրները կարող են կրկին կոալիցիա կազմել: Բայց այս անգամ դրա հավանականությունը փոքր է, քանզի արաբ դաշնակիցները հուսախաբված են Վաշինգտոնի կողմից Իսրայելի վարչապետ Նաթանյահուին ցույց տվող մշտական աջակցությունից եւ այլեւս մտադիր չեն Քլինթոնին հետեւել Սադդամի հետ նրա նոր առճակատման մեջ: Իսկ Ֆրանսիան եւ Ռուսաստանն Իրաքի դեմ հասցված բեռնարձակը համարում են չափազանց խիստ, ձգտելով արաբական աշխարհում պահպանել իրենց վարկը եւ երկյուղելով, որ Բաղդադի դեմ նոր հարձակման դեպքում հակաարեւմտյան ահազնացող ալիքը կվնասի նաեւ իրենց:

Ջորջ Բուշի նախկին խորհրդական եւ «Բրուքինգզ» հասստության տնօրեն Ռիչարդ Հասսը վերջերս լույս ընծայեց «Ակամա շերիֆ» գիրքը, որը նվիրված է Բիլ Քլինթոնին եւ ամերիկյան նոր աշխարհակարգին: «Սառը պատերազմից» հետո ստեղծվեց այնպիսի իրավիճակ, երբ նախկին երկբեւեռ աշխարհի ամրակուռ դաշինքները այլեւս ունակ չեն ապահովել այսօրվա բազմաբեւեռ աշխարհի միակ գերտերություն դարձած ԱՄՆ-ը պետք է կարողանա որոշակի դեպքերում կազմել պետությունների եւ հասարակությունների կոալիցիաներ, որոնք իր հետ մեկտեղ կարձագանքեն նոր մարտահրավերներին: Իրաքի դեմ ձեռնարկված «Անապատի փոթորիկ» գործողությունը, ինչպես նաեւ Բոսնիայում ՆԱՏՕ-ի հետ, Հաիթիում ՄԱԿ-ի հետ իրականացված զինված ձեռնարկումները, մեխանիկական պետության կայունացման նպատակով մասնավոր բանկերի եւ Հարավարեւելյան Ասիայի ֆինանսական ճգնաժամի հարթման նպատակով Միջազգային արժութային հիմնադրամի միջամտությունը այդ նոր միտումի դրսեւորումներն են, հրատապության եւ անհրաժեշտության արգասիքը, բայց դեռեւս դոկտրինա կամ ռազմավարություն չեն, նշում է հեղինակը:

Մոլորակի շերիֆը եւ աշխարհի ժանդարմը միեւնույն բանը չեն: Առաջինը կարգի պահապան է, որը տուն է վերադառնում կարգուկանոնի վերականգնումից հետո: Մինչդեռ երկրորդը առկա մշտապես եւ կայսերական կամքի արտահայտությունն է, որն այսօր այլեւս չի գնահատվում: Հանրության վերջին հարցումների համաձայն, ամերիկացիները ավելի շատ կողմ են հեռաբանմանը, քան միջամտությանը: Բայց իրականությունն այլ է: ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության տվյալների համաձայն, երկրից դուրս ներկայումս տեղաբաշխված է ամերիկյան զորքերի ընդհանուր թվակազմի 16 տոկոսը՝ 226 հազար զինծառայող: Դրա կեսը տեղաբաշխված է ՆԱՏՕ-ի երկրներում եւ նախկին Հարավսլավիայում, ավելի քան 90 հազար զինծառայող առկա է Խաղաղ օվկիանոսի գոտում: Միաժամանակ, Արտաքին գործերի ազգային ընկերակցության տվյալների համաձայն, 1993–96 թթ. ԱՄՆ-ը միակողմանի տնտեսական պատժամիջոցներ է կիրառել 35 երկրի դեմ: ԱՄՆ-ի գլխավոր թիրախներն են Իրանը (նրան ընկնում է բոլոր 61 պատժամիջոցներից 11-ը), Կուբան (9) եւ Սուդանը (7):

Թեեւ ներկայումս աշխարհում հաստատվել է ԱՄՆ-ի գերիշխանություն, բայց այդ երկիրը գտնվում է դիվանագիտական անորոշության մեջ, նշում է Հասսը: Մենակ մնալով, ԱՄՆ-ը կորցրել է կողմնորոշումը: Գլխավոր թշնամու՝ ԽՍՀՄ-ի կործանումից հետո ԱՄՆ-ը փնտրում է նոր ռազմավարություն: Մնացել են սոսկ մի քանի մանր-մունր ախոյաններ ԱՄՆ-ի շահագրգռության գոտիների ծայրամասերում: Սկզբում Քլինթոնի վարչակազմը շաս գոհ էր նոր իրավիճակից եւ ուշադրությունը բեւեռեց ներքին խնդիրների լուծման եւ տնտեսական կայուն զարգացման վրա: ԱՄՆ-ի ազդեցությամբ հիշ թե շաս կազմակերպված միակ աշխարհակարգը դարձան առեւտրական հարաբերությունները, որոնք առայժմ նրա օգտին են: Առ այսօր Առեւտրի համաշխարհային կազմակերպության, Հյուսիսամերիկյան ազատ փոխանակման համաձայնագրի ստեղծումը, Ալյասկայից մինչեւ Հրդ երկիր ընդգրկող վիթխարի շուկայի հիմնման նախագիծը ամերիկյան դիվանագիտության սակավաթիվ հաղթանակներն են: Միայն Բոսնիայի պատերազմը, Հյուսիսային Կորեայից թխող վտանգը, Հաիթիի անկարգությունները եւ Իրաքի սադրանքներն էին, որ զարկ տվեցին ամերիկյան դիվանագիտության ռազմական ուղղվածությանը: Խնդիրն այն է, որ ամերիկյան դիվանագիտություն ոչ թե գոյություն չունի, այլ կա մի քանի դիվանագիտություն: Քլինթոնի վարչակազմի ստեղծած դիվանագիտական դասակարգության պայմաններում գոյություն ունեն Կոնգրեսի, նահանգների, տեղական իշխանությունների եւ բազմաթիվ լոբբիստական խմբերի դիվանագիտություններ: Այսպես, ներկայացուցիչների պալատ հանրապետական մեծամասնությունն ամեն անգամ քվեարկում է բազմակողմ կազմակերպությունների դեմ ԱՄՆ-ի բաղադրիչներն ու նահանգները գործողությունների լիակատար ազատություն են պահանջում, դատապարտում Բիրմայում կամ Նիգերիայում գործող այն ձեռնարկությունների պայմանագրերը, որոնք Իռլանդիայում բավարար թվով կաթոլիկներ չեն հավաքագրում կամ օգտագործում են չինական կալանավայրերում պատրաստված արտադրանքներ: Պետդեպարտամենտը այս միտումները համակարգելու հնարավորություն չունի:

Մի խոսքով, 20-րդ դարը ԱՄՆ-ի համար ավարտվում է անորոշության պայմաններում: «Թայմ» հանդեսի հիմնադիր Հենրի Լյուսը կանխատեսել էր, որ մեր հարյուրամյակը լինելու է «ամերիկյան»: Իրոք, այդպես եղավ: Բայց նա չէր կարող կանխատեսել, որ 3-րդ հազարամյակի շեմին աշխարհում միակ գերտերություն դարձած ԱՄՆ-ը չի իմանա, թե ինչպես վարվի իր հաղթանակի հետ:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

ԱՄՆ-ը ԽՍՀՄ կործանումից հետո հակառակորդ է փնտրում



ներկայումս տեղաբաշխված է ամերիկյան զորքերի ընդհանուր թվակազմի 16 տոկոսը՝ 226 հազար զինծառայող: Դրա կեսը տեղաբաշխված է ՆԱՏՕ-ի երկրներում եւ նախկին Հարավսլավիայում, ավելի քան 90 հազար զինծառայող առկա է Խաղաղ օվկիանոսի գոտում: Միաժամանակ, Արտաքին գործերի ազգային ընկերակցության տվյալների համաձայն, 1993–96 թթ. ԱՄՆ-ը միակողմանի տնտեսական պատժամիջոցներ է կիրառել 35 երկրի դեմ: ԱՄՆ-ի գլխավոր թիրախներն են Իրանը (նրան ընկնում է բոլոր 61 պատժամիջոցներից 11-ը), Կուբան (9) եւ Սուդանը (7):

Թեեւ ներկայումս աշխարհում հաստատվել է ԱՄՆ-ի գերիշխանություն, բայց այդ երկիրը գտնվում է դիվանագիտական անորոշության մեջ, նշում է Հասսը: Մենակ մնալով, ԱՄՆ-ը կորցրել է կողմնորոշումը: Գլխավոր թշնամու՝ ԽՍՀՄ-ի կործանումից հետո ԱՄՆ-ը փնտրում է նոր ռազմավարություն: Մնացել են սոսկ մի քանի մանր-մունր ախոյաններ ԱՄՆ-ի շահագրգռության գոտիների ծայրամասերում: Սկզբում Քլինթոնի վարչակազմը շաս գոհ էր նոր իրավիճակից եւ ուշադրությունը բեւեռեց ներքին խնդիրների լուծման եւ տնտեսական կայուն զարգացման վրա: ԱՄՆ-ի ազդեցությամբ հիշ թե շաս կազմակերպված միակ աշխարհակարգը դարձան առեւտրական հարաբերությունները, որոնք առայժմ նրա օգտին են: Առ այսօր Առեւտրի համաշխարհային կազմակերպության, Հյուսիսամերիկյան ազատ փոխանակման համաձայնագրի ստեղծումը, Ալյասկայից մինչեւ Հրդ երկիր ընդգրկող վիթխարի շուկայի հիմնման նախագիծը ամերիկյան դիվանագիտության սակավաթիվ հաղթանակներն են: Միայն Բոսնիայի պատերազմը, Հյուսիսային Կորեայից թխող վտանգը, Հաիթիի անկարգությունները եւ Իրաքի սադրանքներն էին, որ զարկ տվեցին ամերիկյան դիվանագիտության ռազմական ուղղվածությանը: Խնդիրն այն է, որ ամերիկյան դիվանագիտություն ոչ թե գոյություն չունի, այլ կա մի քանի դիվանագիտություն: Քլինթոնի վարչակազմի ստեղծած դիվանագիտական դասակարգության պայմաններում գոյություն ունեն Կոնգրեսի, նահանգների, տեղական իշխանությունների եւ բազմաթիվ լոբբիստական խմբերի դիվանագիտություններ: Այսպես, ներկայացուցիչների պալատ հանրապետական մեծամասնությունն ամեն անգամ քվեարկում է բազմակողմ կազմակերպությունների դեմ: ԱՄՆ-ի բաղադրիչներն ու նահանգները գործողությունների լիակատար ազատություն են պահանջում, դատապարտում Բիրմայում կամ Նիգերիայում գործող այն ձեռնարկությունների պայմանագրերը, որոնք Իռլանդիայում բավարար թվով կաթոլիկներ չեն հավաքագրում կամ օգտագործում են չինական կալանավայրերում պատրաստված արտադրանքներ: Պետդեպարտամենտը այս միտումները համակարգելու հնարավորություն չունի:

Մի խոսքով, 20-րդ դարը ԱՄՆ-ի համար ավարտվում է անորոշության պայմաններում: «Թայմ» հանդեսի հիմնադիր Հենրի Լյուսը կանխատեսել էր, որ մեր հարյուրամյակը լինելու է «ամերիկյան»: Իրոք, այդպես եղավ: Բայց նա չէր կարող կանխատեսել, որ 3-րդ հազարամյակի շեմին աշխարհում միակ գերտերություն դարձած ԱՄՆ-ը չի իմանա, թե ինչպես վարվի իր հաղթանակի հետ:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

Վրաստանը եվրասիական միջանցքի զարգացման լուրջ փուլ է թեւակոխում

ԹԲԻԼԻՍԻ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վրաստանը իր տարանցիկ կարողությունների մասին համառարփակ տեղեկություններ կներկայացնի նավթի ու գազի փոխադրման խնդիրների շուրջ Եվրամիության YINOGATEF ծրագրի մասնակից երկրների ներկայացուցիչների դեկտեմբերի 4–5-ը Բրյուսելում կայանալիք չորրորդ հանդիպմանը. Փրայմ նյուսի թղթակցին հաղորդել է վրացական պատվիրակության ղեկավարը՝ Վրաստանի պետնախարար Նիկո Լեկիշվիլին:

Նախատեսվում է քննարկել էներգակիրների փոխադրման, առաքման հետ կապված ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցների հայթայթման հարցը:

Բրյուսել են ժամանում Անդրկովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրների կառավարությունների եւ համաշխարհային ճյուղերի ղեկավարները: Նրանց համար «կլոր սեղան» է անցկացնելու եվրակոմիսար Հանս վան դեն Բրուքը:

Բրյուսելում կայանալիք հանդիպումներին մասնակցելու են Համաշխարհային բանկի եւ Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի ներկայացուցիչները:

Ի տարբերություն նախորդ երեք հանդիպումների, որոնք անցկացվել էին փոքրագետների մակարդակով, ներկա հանդիպմանը, Լեկիշվիլու խոսքերով, «առավել լուրջ աշխատանք է սպասում»: Դա կապված է այն բանի հետ, որ մասնավորապես 1998 թվականից Վրաստանը տարանցիկ առաքման տեսակետից նոր փուլ է թեւակոխում: Նախատեսվում է Վրաստանի տարածով դազախական նավթի փոխադրման ծավալը տարեկան հասցնել մինչեւ 5–7 միլիոն տոննայի. Սուփսայի նավթամբարները գործի դնել երկրորդ կիսամյակում եւ շարք մտցնել լաստանավային երկաթուղագիծը Փոթիից:

Պետնախարարը ենթադրում է, որ առ 1999 թվականը Վրաստանի տարածով փոխադրվող դազախական եւ ադրբեջանական նավթի ծավալները տարեկան կկազմեն մոտ 15 միլիոն տոննա:

ԹՈՒՐՔԻԱ

Ռուսաստանի վարչապետը կայցելի Անկարա

ԱՆԿԱՐԱ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը իր թուրք պաշտոնակցի՝ Մեսութ Յըլմազի հրավերով դեկտեմբերի 15–16-ը պաշտոնական այցով կկատարի Անկարա: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, այդ մասին այսօր հաղորդել է Թուրքիայի արտգործնախարարությունը:

Ռուսաստանի նախարարների կաբինետի ղեկավարի այցի ընթացքում նախատեսված է միջկառավարական համաձայնագիր ստորագրել Անդրսեւծովյան գազամուղով («Երկնագույն հոսք» նախագիծ) Թուրքիային ռուսական բնական գազ մատակարարելու, կապիտալ ներդրումները պաշտպանելու եւ խրախուսելու, կրկնակի հարկադրումից խուսափելու եւ առեւտրատնտեսական ու գիտատեխնիկական բնագավառներում համագործակցության տասնամյա ծրագրի վերաբերյալ:

Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը նշել է, որ Ռուսաստանի վարչապետի Անկարայում գտնվելու ընթացքում նախատեսվում է նաեւ քննարկել երկկողմ հարաբերությունների ներկայիս վիճակն ու դրանց խորացման հեռագա հեռանկարները, տարածաշրջանային եւ միջազգային հարցեր:

Ռուսաստանի անկախության հռչակումից ի վեր Վիկտոր Չեռնոմիրդինը առաջին պետական գործիչ է, որը պաշտոնական այցով կլինի Թուրքիայում: Դրա նախապատրաստմանն էր նվիրված առեւտրատնտեսական համագործակցության միջկառավարական խառը հանձնաժողովի նոյեմբերի սկզբներին Անկարայում կայացած երրորդ նիստը, ինչպես նաեւ տնտեսության հարցերով պետնախարար Գյունեշ Թաների այցը Մոսկվա:

Ստամբուլում զորավարժություններ Ադրբեջանի եւ Վրաստանի ուժերի մասնակցությամբ

ՍՏԱՄԲՈՒԼ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ստամբուլում սկսվել են հրամանատարական-շտաբային «Կոոպերեյտիվ դեմանդ-97» զորավարժությունները, որոնց մասնակցում են Ադրբեջանի եւ Վրաստանի զինված ուժերի խաղաղարարական վաշտերի ստորաբաժանումները:

Զորավարժությունները, որոնք կտեւեն մինչեւ դեկտեմբերի 5-ը, տեղի են ունենում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում: Դրանց մասնակցում են ԱՄՆ-ի, Թուրքիայի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ալբանիայի, Մակեդոնիայի, Ուկրաինայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Վրաստանի, Ուզբեկստանի եւ Թուրքմենստանի զինված ուժերի ներկայացուցիչները:

ՏԱՐԱՌՈՏ

Արտավիրաբույժ Մայքլ Դեբեյկիի անվան հոլեջ Բեյրութում

Լիբանանյան ծագումով ամերիկյան արտաքին Մայքլ Դեբեյկին առաջին անգամ այցելեց իր պատմական հայրենիք: Նախագահ Բորիս Ելցինի արտի վիրահատությամբ Ռուսաստանում հայտնի վիրաբույժը խոստացել էր օգնել Լիբանանում բժշկական հոլեջ հիմնելու գործին:

Համաձայն Բեյրութից ստացված տեղեկությունների, այդ խոստումը Դեբեյկին կատարեց լիբանանա-ամերիկյան համալսարանի տարածքում իր պատվին հուշատախտակի բացման ժամանակ: Ջբեյլիում Դեբեյկու անվան հոլեջի շինարարությունը կնստի 40–50 միլիոն դոլար:

89-ամյա վիրաբույժի ծնողները Լիբանանից ԱՄՆ են գաղթել 19-րդ դարի վերջին: Բժշկական երկարամյա պրակտիկայի ընթացքում Դեբեյկին կատարել է արտի 60 հազար վիրահատություն եւ հրապարակել է մոտ 1300 բժշկագիտական գիրք, բրոշյուր եւ հոդված:

Մեծ Բրիտանիա. Էլիզաբեթ Բ-ն կրճատում է արքունական ծախսերը

Մեծ Բրիտանիայի Էլիզաբեթ Բ թագուհին, որը նոյեմբերի 20-ին նշեց իր «ոսկե հարսանիքը», երկրում ստեղծված գահակալական ճգնաժամի առնչությամբ այն միտքն է հայտնել, որ չի կարելի «մեկ սերունդ բաց թողնել» եւ թագը հանձնել իր թոռանը՝ իշխան Ուիլյամին: Թագուհին գտնում է, որ դա կխարխլեր «միապետության թավշանքը»: Միաժամանակ Էլիզաբեթ Բ-ն համաձայն է, որ արքունական ծախսերի կրճատումը միապետությունն առավել ժողովրդական դարձնելու ամենաարդյունավետ միջոցն է: Վերջին յոթ տարում թագուհու բյուջեն արդեն իսկ կրճատվել է 39 տոկոսով:

Վենեսուելան յուրացնում է սահմանամերձ հողերը

Վենեսուելայի կառավարությունը սկսել է յուրացնել Կոլումբիայի սահմանի երկայնքով 2000 կմ ձգվող հողատարածքները, որոնցում դիմագրավի հարեւան երկրից պարտիզանների, թմրադեղերի առեւտրականների եւ զինված հրոսակախմբերի ներկա թափանցումները: Մի շարք նոր բնակիչներ կկառուցվեն այդ սակավաթիվ գոտին «գաղութացնելու» նպատակով, որտեղ կտեղաբաշխվեն նաեւ խոշոր կայազորներ: Այդ բաղադրիչներից առաջինը՝ 1000 բնակչի համար նախատեսված Սյուդադ Սուկրեն, օրերս ավարտուն տեսք ստացավ: Դրա բնակիչներն անվճար կստանան տուն եւ ավելի քան 3000 դոլար պարգեւավճար:

«ԷՔՍՊՐԵՍ»

Հունգարիայում ստեղծվել է վիրակ կանանց միություն

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունգարիայում ստեղծվել է վիրակ կանանց միություն, որը պաշտպանում գրանցված է որպես կրոնական կազմակերպություն: Հունգարիայի վիրակ կանայք թաղք ու գիր են անում, կախարդություն, գուշակություն եւ այլն: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, Հունգարիայի գլխավոր դատախազ Բերին հայտարարել է, թե վիրակները «փողի մեջ լող են տալիս» եւ պահանջել է, որ նրանք եկամտահարկ վճարեն:

ԱԶԳ

Մշակույթ

Ֆելիքս Սիմոնյանի բազմերանգ կատարողական արվեստը

Ույն հողվածի համար առիթ հանդիսացավ Ֆրանսիական երաժշտության փառատոնի համերգներից մեկը, որը Երևանում անցկացվեց Ֆրանսիայի դեսպանության հովանավորությամբ: Ֆրանսիայի երաժշտական մշակույթը սիրված է հայերի կողմից եւ դատմականորեն շատ համահունչ է հայկական ոգուն: Ուզում եմ մասնավորապես գրել Ֆելիքս Սիմոնյանի մասին, քանի որ բազմիցս ինձ վիճակվել է դառնալ նրա փայլուն ելույթների ականատեսը:

Ֆելիքս Սիմոնյանի կատարողական արվեստում անորսալի կերպով միահյուսվել են շատ դարաշրջանների ոճեր՝ թե երաժշտական դատության դասական շերտի խիստ կոնկրետությունը, թե մեր հիստերիկ ժամանակների երաժշտության սրտաճմլիկ-ողբերգական, հակասություններով լի սրությունը, թե ռոմանտիզմի ոսկե դարի հուզական դոռթկունությունը եւ թե իմպրեսիոնիստական հնչահանգությունը: Նրա նվագացանկային բազմազանությունը նման է բլումովյան «Հավերժական խաղաթղթի», որտեղ մարդկային երեւակայության առեղծվածային կամքով ի մի են հավաքվել բոլոր ժամանակների ու խաղակերպությունների երաժշտական «ճարտարապետության» ամենահոյակապ կերպարները:

Դատեցեք ինքներդ: Ֆելիքս Սիմոնյանը նվագել է տասներկու համերգաշար, որոնցից կիհշատակեմ լոկ առավել նշանակալիները հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ հրեշ Ալոյզիր, ութ համերգ «20-րդ դարի թավջութակային երաժշտություն» խորագրով, Պաուլ Հինդեմիթի թավջութակի ու դաշնամուրի համար գրած բոլոր ստեղծագործությունները, Բախի բոլոր թավջութակային մենայուիտները (1995 թ. Փարիզ, Սեն Լուի ան լ'Իլ եկեղեցին):

Առանձին համերգներն ընդհանրապես թիվ ու հաշիվ չունեն, եւ դրանցից շատերում հնչում է՝ հայկական նոր երաժշտություն, որի կատարումը մեր հիանալի երաժիշտը համարում է դատվի գործ: Քանզի նոր հայկական երաժշտությունը հենց հիմա է կարոտ կատարողական լուրջ դատապանության, իսկ ազգային արվեստի հանդեպ համահանքը օրեցօր էլ ավելի մեծ չափով եւ անդառնալիորեն մեզ մեկուսացնում է համաշխարհային արվեստի առաջընթացից:

Ֆելիքս Սիմոնյանի կատարմամբ առաջին անգամ հնչել են 130-ից ավելի նոր ստեղծագործություններ, որոնք մեծ մասամբ դատկանում են հայ կոմպոզիտորների գրչին եւ, որոնցից գրեթե 70-ը նվիրված է առաջին կատարողին: Թվերն ավելի քան դատկառելի են, անունները՝ նույնպես. Հարո Ստեփանյան, Արտեմի Այվազյան, Ադամ Խուդոյան, Տիգրան Մանսուրյան, Հրանտ Բեգլարյան, Սուլխան Ցինցադե: Առամ Խաչատրյանի, Էդգար Հովհաննիսյանի, Բենջամին Բրիտտենի, Քսենակիսի, Պաուլ Հինդեմիթի, Ավետ Տերտերյանի եւ 20-րդ դարի շատ ուրիշ նշանավոր ստեղծագործողների երկերի կատարումները աչքի էին ընկնում մեկնաբանությունների յուրօրինակությամբ ու փայլով, ձեւերի կատարելությամբ եւ կատարողական անթերի տեխնիկայով:

Անձամբ օժտված լինելով ուրույն կոմպոզիտորական ձիրքով (Ֆելիքս Սիմոնյանի գրչին դատկանում է մի



քանի հիանալի թավջութակային երկ): Նա նուրբ գեղարվեստական հատառությամբ եւ նրբազգացությամբ հնչյունավորում է ինչպես իր, այնպես էլ ուրիշների երաժշտությունը, գտնելով միակ հնարավոր, մտահղացմանը համադատասխան կատարողական տարբերակը: Սա հենց այն զարմանալի դեպքն է, երբ կոմպոզիտորը, նոտագրության մեջ արձանագրված միտքը վստահելով իր կատարողին, համոզված է նրա ընթերցման ստուգությանը, ինչը ես կարող եմ վկայել նաեւ որպես հեղինակ, որի երաժշտությունը արգասավորվել է Ֆելիքս Սիմոնյանի իմաստավորված ներշնչանքով: Նա գաղափարը տեսնում է կոմպոզիտորի դեպ, ասես ներսից, հանդիսանալով հեղինակի կամքը շարունակողը ճիշտ այնպես, ինչպես հեղինակի կամքը իր հերթին աստվածային կամքի շարունակությունն է:

Գուցե կատարողի մեջ հարկավոր է ամեն ինչից վեր գնահատել համահեղինակության հենց այդ ունակությունը, քանի որ ներշնչանքի էությունը իրական կերպով հնչող հյուսվածքի խորքերում թաքնված այն գաղտնիքի գիտակցման ճշմարտացիությունն է, որը մատչելի է միայն գիտակներին:

Այն համերգը, որի մասին ես ուզում էի դատմել, կառուցված էր բնավ ոչ ավանդական ձեւով: Ամեն ինչ ասես հակառակն էր՝ մեր օրերի երաժշտությունից դեպի անցած ժամանակների խորքերը: Առաջին բաժնում հնչեց 20-րդ դարի ֆրանսիական երաժշտություն. երաժշտական հինավուրց արտահայտությունների բեկորներից եւ մեր ժամանակաշրջանի դառնաձուն ներդաշնակություններից նրբագեղորեն եւ հեգնանքով «թխված» Զիգֆրիդ Բարտեի «Մենոնյան դատկերները» հարեւանում էին Անդրե Ժոլիվեի բազմաչափ էմդրեսիվ-դոռթկուն, հազար անհերեւակայելի կտրուկ գույներով երանգված կոնցերտային սյուիտի հետ: Հարկավոր է իսկական հրաշագործ լինել հնչյունի մենմիակ աղբյուրից՝ թավջութակից նման գունագեղ ակուստիկ հրավառություն «դեղելու»:

Իսկ երկրորդ բաժինը, որտեղ Ֆելիքս Սիմոնյանը հանդես եկավ ձիրքաշաս, կատարման եւ կատարողի ոճը նրբորեն զգացող կլավեսինահարուհի Մարիաննա Աբրահամյան-Սդարեի հետ, հնչեց նախադասական շրջանի ֆրանսիական երաժշտություն: Այդ բաժինը անդատասելիորեն աչքի ընկավ բարձր հուզականությամբ եւ բյուրեղային մաքրությամբ: Ֆրանսուա Կուպերենի, Ժան Ֆիլիպ Ռամոյի, Լուի դը Էվելուայի սյուիտների ներդաշնակությունն ու խստաշունչ գեղեցկությունը եւ Ս. Մարեի «Ֆոլիան»-ը ունկնդրին ներկայացան որպես սլացիկության եւ լիահնչության աշխարհը, իսկ մեր բեմերում հիշ երեւացող կլավեսինը հնչում էր նրբագեղորեն, լրացնելով թավջութակի բոհիչելիական արտահայտչականությունը:

Հենց սա է վարպետությունը, երբ նորին մեծություն երաժշտությունը տդավորվելով գիտակցության մեջ, ինքն է դառնում խորհրդավոր հոգեւոր միստերիայի գլխավոր դերասանը, իսկ այն կատարող երաժիշտները լոկ նրա հավատարիմ սենեկապաններն են:

Ինձ թվում է, որ այդ հրաշալի համերգը, ոգեշունչ թավջութակահարի ու կոմպոզիտորի կյանքի հետագա էլ ավելի նշանակալի ստեղծագործական իրադարձությունների սկիզբն է միայն:

ՄԻՔԱՅԵԼ ԿՈՆԿԱՆԵՎ
Կոմպոզիտոր, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դրոֆեսոր

Մեկամյա ընդմիջումից հետո հանդես եկավ կույրերի միավորման երգչախումբը

Ավելի քան երկու տասնամյակ առաջ՝ 1976 թվականին, կոմպոզիտոր Սիմոն Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Հայաստանի կույրերի միավորման երգչախումբը, որի առաջին ելույթը տեղի ունեցավ կոմպոզիտորների տանը: Անցած ժամանակաշրջանում երգչախումբը տվել է շուրջ 350 համերգ՝ հանդես գալով Հայաստանի բոլոր շրջաններում, ինչպես նաեւ Ռուսաստանում, Վրաստանում, Բելառուսում: Ի դեպ, հենց Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայացած միջազգային մրցույթում նա շահել է երրորդ մրցանակ:

Երգչախմբի կարեւոր արժանիքներից մեկն այն է, որ նա տարածել ու ժողովրդականացրել է հայ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունները, որոնց շատ գործեր առաջին անգամ հնչել են այս խմբի կատարմամբ: Երկու հարյուր ստեղծագործություններ են ընդգրկված երգչախմբի համերգացանկում, ուր իրենց արժանի տեղն ունեն հայ դասական կոմպոզիտորներ Կոմիտասի, Կարա Մուրզայի, Մակար Եկմալյանի, Տիգրան Չուխաջյանի եւ ուրիշների խմբերգերը: Մեծ թիվ են կազմում նաեւ ռուս եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ստեղծագործական այս խմբի գեղարվեստական ղեկավար Սիմոն Հովհաննիսյանը եւ դիրիժոր Կարո Ալեքսանյանը նվիրվումով են կատարել կամովին վերցրած դատարավորությունները եւ իրենց կատարած աշխատանքի համար, հիրավի, հդարտանալու հիմք ունեն:

Սակայն վերջին ժամանակներում կոլեկտիվի գործունեությունը վտանգված էր:

Բարեբախտաբար, ամերիկյան «ԷԼԴԻԷՍ» բարեգործական ընկերության ղեկավարությունը օգնության ձեռք մեկնեց երգչախմբին: Նրա հովանավորությամբ գրեթե մեկ տարվա ընդմիջումից հետո մայրաքաղաքի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ երգչախմբի համերգը: Ծրագիրը կազմված էր հայ, ռուս եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններից: Խմբավարն էր Կարո Ալեքսանյանը:

Հ. Մ.

ՍՓՅՈՒՌՔ

Լիբանան. Չարենցյան օրեր

Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան նախաձեռնութեամբ եւ գործակցութեամբ Լիբանանի տարբ գրողներու միութեան, Համազգայինի, Թէֆէեանի, Նոր սերունդի, ՀԵԸ-ի եւ անհատ մտաւորականներու, նոյեմբեր 12էն 20ը յայտարարուեցաւ «Չարենցեան շաբաթ», որուն ընթացքին եւ իրեւանյաղորդ կերպով գործադրուեցան մամլոյ ասուլիս, քառալեզու գիտաժողովներ (հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն) եւ մեծարանքի դատասօնական հանդիսութիւն (թղթակցիները կարդալ ստորեւ), որոնք եզրափակուեցան Երեւանի Սենեկային երգչախումբի համերգով:

Ե. Չարենցի յոբելեանը յատկանուեցաւ նաեւ գիրքերու հրատարակումով՝ հայերէն եւ արաբերէն: Հայերէն հատորը, որ կը բովանդակէ 100 բանաստեղծութիւն, կը խորհրդանշէ բանաստեղծին ծննդեան 100ամեակը, իսկ արաբերէն ժողովածուն՝ Չարենցի կեանքի 40 տարիները (40 բանաստեղծութիւն): Հատորները կը վայելեն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանաւորութիւնը:

Հակառակ անոր որ լիբանանահայ իրականութեան մէջ անանխընթաց երեւոյթ մըն է հայ մեծանուն բանաստեղծին ծննդեան 100 եւ մահուան 60ամեակին առթիվ դեսական մակարդակով մատուցուած այս մեծարանքը, այսուհանդերձ «Չարենցեան շաբաթ»ը ամբողջութեամբ չիրականացուց սպասումները՝ ներկայացուած գիտաժողովներու, բանախօսութիւններու, թէ ժողովրդային եւ մտաւորական խաւերու մասնակցութեան ու ոգեւորութեան տեսակէտէ:

Այս առիթով դէտք է նշել, որ հայ համայնքի մշակութային միութիւններն ու կրթական հաստատութիւնները, իրենց կարգին, չնախաձեռնեցին Չարենցի 100ամեակը նշող հրատարակային, ժողովրդային եւ երիտասարդական հանդիսութիւններու եւ, այսդէսով, ժողովուրդին մեծամասնութիւնը անմասն մնաց եղիէ Չարենցի մեծարման եւ արժեւորման մթնոլորտէն:

«ԱԶԳԱԿ»

ԱՄՆ. Վարանդյան ժառանգությունը ՀՈՒՀԱԱ-ին

Ամերիկայում գործող Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (ՀՈՒՀԱԱ) տնօրենների խորհրդի նախագահ Մանուկ Յանգի հայտարարության համաձայն վերջին երկու տարիների ընթացքում ասոցիացիան ստացել է մի շարք նվիրատվություններ, որոնցից հիշատակության արժանի է էմանուել Վարանդյանի կալվածքի 125 հազար դոլարի ժառանգությանը, որն ամբողջությամբ օգտագործվելու է գիտնականի գործերի վերահրատարակչության եւ գրանտների ձեւով հետագա ուսումնասիրություններ կազմակերպելու նպատակով:

Գիտնականը անգլերենի եւ համեմատական գրականության վաստակավոր դրոֆեսոր էր Օհայոյի դետական համալսարանում եւ հեղինակ՝ մի շարք վեպերի, կարճ դատմվածքների եւ բանաստեղծությունների: 1988 թվին, 86 տարեկան հասակում ավտովթարի հետեւանքով ողբերգական մահվանից հետո ժառանգության շուրջ ծագած երկար դատական վեճերը միայն վերջերս ավարտվեցին հնարավոր դարձնելով նրա ամբողջ կալվածքը, ներառյալ գրադարանը, ստեղծագործությունները, առանձնատունն ու այլ հիշարժան առարկաները փոխանցել ՀՈՒՀԱԱ-ին: Ասոցիացիայի հիմնադիր անդամներից լինելով, Վարանդյանը 1958–64 թվերին ընդգրկվել էր նրա տնօրենների խորհրդում: Նա դերձախոս էր եւ հանդիսությունների փնտրված ճարտասանը: Մեծ ներդնում ուներ Հարվարդում հայագիտական ամբիոն բացելու գործում:



Հ. Ծ.

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

Դպրոցական «Մրցույթ-փառատոն՝ Երեւան 97»

երեք օր անընդմեջ «Կանաչ» մշակույթի տանը իրենց կյանքի ամենաջերմ ու հուզառաս դահերն էին ապրում մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների սաները: Ավելի քան հարյուր դպրոցների ոսկու հատիկները երեք օր իրենց երգ ու դարով ջերմացրեցին մշակույթի օջախը՝ այն վերածելով իսկական դպրոցի, դպրոց գեղեցիկի, դպրոց ճաշակի, դպրոց շնորհակալանքի:

Այստեղ անցկացվող երեւան քաղաքի դպրոցական գեղարվեստական ինքնագործունեության մրցույթ-փառատոն մտահղացել էր «Կանաչ» մշակույթի տան տնօրինությունը՝ մայրաքաղաքի դպրոցների լավագույն աշակերտներին հայտնաբերելու եւ ընդառաջելու նպատակով: Այս հարկի տակ նման մրցույթ-փառատոն առաջին անգամ կազմակերպվել է 1995 թ. աշնանը, իսկ այսուհետ կդառնա ամենամյա:

Մրցույթ-փառատոնի ծրագրում ընդգրկված էին ազգային եւ ժամանակակից, արտասահմանյան դարեր ու վոկալ երաժշտություն:

Մրցույթն ընթացավ երեք փուլով, նոյեմբերի 30-ին որոշվեցին ամենաբարձր մրցանակ՝ «Գրան-դրի» շահած մրցանակակիրները: Բացի ամենաբարձր մրցանակից, սահմանված քանչորս մրցանակային տեղերի մեջ կային եւ 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի մրցանակներ:

«Գրան-դրի» մրցանակ շահեցին Սոֆյա Սայաթյանը, Ջուլիետա Մաթեւոսյանը, Միլեն Ամիրբեկյանը եւ թիվ 76 դպրոցի «Վիկտորիա» դարային համույթը:

Այս փառատոնը եղավ վկայախոսը այն մեծ փաստի, որ մեր դպրոցականներից շատերն արդեն ընտրել են իրենց ուղին: Իսկ գնահատող հանձնախմբի գովեստի ու գնահատանքի խոսքերը կդառնան դարտավորեցնող ու սթափեցնող երեխաների համար: Հանձնախումբը գլխավորում էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի, դետական մրցանակների դափնեկիր, Կոմիտասի անվան դետական կոնսերվատորիայի դրոֆեսոր Տաթեւիկ Սազանդարյանը:

ՎԱԲԴՈՒՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ,
ԵԴՀ ժուռնալիստիկայի բաժնի V կուրս

ԳՐԱԿԱՆ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Դեկտեմբերի 4-ին, ժամը 14-ին, գրողների միության կլոր սրահում տեղի կունենա

ԴԻԱՆԱ ՔԵԼԵՄՅԱՆԻ

«Դաշտը»

գրքի ննջարկումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Վաղվա օրվա հանդեպ լավատեսությամբ

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի մրցավարական կոմիտեի նիստը

Ամեն ֆուտբոլային մրցաշրջանի ավարտին, պատկերավոր ասած, գալիս է աճեցրած բերքը հավաքելու կամ ճտերը հաշվելու ժամանակը:

Ամփոփում են արդյունքները, վերլուծում կատարվածի պատճառահետեւանքային կապերը. նախանշում ֆուտբոլի զարգացման ուղիները՝ իրականացված համալիր աշխատանքի հարթության վրա: Եվ ամեն մի ոլորտում առանձին-առանձին, հանգի միլիոնների խաղի տարբեր բաղադրամասերից է ամբողջանում եւ կառուցվում ֆուտբոլային վերնաշենքը միշտ ու ամենուր:

Ոչ հեռու անցյալում մրցավարությունը հայկական ֆուտբոլի ամիլլեսյան գարշապարն էր: Բարեփոխիչ ռեֆորմների շնորհիվ այսօր տրամագծորեն այլ է պատկերը բնագավառում: Այստեղից էլ՝ գործնական աշխույժ մթնոլորտը ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայի մրցավարական կոմիտեի ամփոփիչ նիստում, որին մասնակիցները ներկայացել էին կատարված պարտքի գիտակցությամբ: Թեմիսի սպասավորներին շնորհավորելով մրցաշրջանի լիակման կապակցությամբ, մրցումների անցկացման եւ մրցավարական կոմիտեների նախագահ Պետրոս Տեր-Պետրոսյանն իր գոհունակությունը հայտնեց հավակվածներին՝ ընդհանուր առմամբ լավ գնահատելով իրականացված աշխատանքը հաշվետու շրջափուլում:

Մրցավարն էլ մարդ է եւ կարող է սխալվել: Բայց դա չի նշանակում, թե ակամա վրիպումները պետք է ինքնադատասան-հաշվեհարդարների տեղիք տան շահագրգռված անձանց ու վայ-ֆուտբոլասերներին: Ով փորձել է, պատժվել է ֆուտբոլային օրենսգրքի տառուբառով՝ ինքնաբերաբար կանխելով իրադարձությունների հետագա անկանխատեսելի զարգացման ոչ ցանկալի միտումները խաղադաշտում: Ասել է թե՝ առիթ տվել է մրցավարների անվտանգությունը, որն էլ, թերեւս, գլխավոր ձեռքբերումն է մրցաշրջան-97-ում: «Իհարկե, կան դեպքեր, երբ չկա աջուձախ շռայլելու կարիք, դեղին քարտերը, բայց համաձայնեք, որ հեռու հմտակատարությունն ու ռեալականությունն են մրցավարի գլխավոր գեներն աշխատանքի պահին», իրավացիորեն նկատեց բանախոսը, հավելելով, որ վայրկենական տատանումն իսկ ֆուտբոլիստներին պատժելիս կամ 11 մետրանոց նշանակելիս կարող են ճակատագրական լինել՝ սվերելով խաղն ու իջեցնելով մրցավարի վարկանիշը: Ֆուտբոլային հանդիպումները սպասարկող բրիգադների առջեւ կանաչ լույս է վառում նորերս ընդունված որոշումը, ըստ որի այսուհետ չեն բողոքարկվելու մրցավարների բույլ տված սխալները խաղադաշտում, էական մի հանգամանք, որն առաջընթաց քայլ է նրանց հեղինակության ու պատասխանատվության բարձրացման ճանապարհին, որակական տեղաշարժերի հուսալի գրավական: «Գուցե թե դրանո՞վ հնարավոր լինի բացառել ֆուտբոլային թեմայով պատվիրված հրապարակումները, որոնք ընդհանուր գործին նպաստելու փոխարեն՝ կրակին յուղ լցնելու դեր են կատարում՝ անհարկի խոսակցությունների եւ ասեկոսեների հիմնապատճառ դառնալով մեր մշաբորբոտ ֆուտբոլային խոհանոցում», փաստեց պրն Տեր-Պետրոսյանը՝ մտահոգություն հայտնելով, որ խոսքի ազատության ողջածծկության ներքո, որոշ գրչակիր տարրեր ծուկ որսալու որդեգրած քաղաքականությունը:

Ֆուտբոլի մասին պետք է գրեն միայն պրոֆեսիոնալները, քանի որ արդեն իսկ գնում ենք դեպի պրոֆեսիոնալ լիգա, նույնն է թե՝ պրոֆեսիոնալ մրցավարություն՝ աշխատածի հիմքերի հիմքը դարձնելով պայմանագրային սկզբունքը:

Սիրողականից հայկական ֆուտբոլը տեղափոխվում է պրոֆեսիոնալ ռելսերի վրա, եւ արդեն մինչեւ տարեմուտ գործնական քննարկումներ կլինեն շահագրգիռ ակումբների ղեկավարների հետ՝ լիգայի առաջին դիվիզիոնի առաջնության մասնակից թիմերի քանակը ճշգրտելու եւ ընթացիկ ուրիշ հիմնախնդիրների շուրջ:

Չի անտեսվելու նաեւ կանանց ֆուտբոլը, քանի որ ունենք արհեստավարժ չափանիշներով առաջնորդվող աղջիկների մրցավարական բրիգադ:

Ֆուտբոլային մարաթոնի ծանրաբեռնվածությանը դիմանալու համար բոլորը պետք է լինեն լավագույն մարզավիճակում: Դրա համար կան լավ նախադայմաններ, որովհետեւ բնագավառում վաղուց է արմատավորվել մրցավարների որակավորման դասընթացների եւ սեմինարների, արտագնա ուսումնամարզական հավաքների ու նորմատիվ-սուդարքների հանձնման ուսանելի պրակտիկան:

Ընդ որում, հիմնավոր այդ տեղաշարժերը ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի պահանջները կատարելու, միջազգային ստանդարտներն առաջնորդելու միակ նախադայմանն են:

Արվել ու արվում է ամեն ինչ՝ մրցավարների ֆինանսական ու բարոյահոգեբանական վիճակը բարելավելու ուղղությամբ, եզրափակեց Պետրոս Տեր-Պետրոսյանը՝ բնավ էլ ոչ դյուրին գործ համարելով որոշ իմաստով բեւեռացված մեր ֆուտբոլում մրցավարելը: Մասնավորաբար, ո՞վ կարող էր կանխավ պատկերացնել, որ վերջին տարիների ընդգծված առաջատար «Փյունիկը» հինգ անգամ կդարձվի, «Երեւանը» չեմպիոնական կեցվածքով կշեռքի մեջքը, իսկ «Էրեբունի-ՀՄՄ»-ն էլ՝ «Փյունիկի» պես կիառնի մոխիրներից: Այնպես որ, միջանկյալ առաջնության վերջնագծում հոգեբանական գործոնը մղվեց առաջին պլան՝ մրցավարներին սպիտելով ֆուտբոլիստներին անգամ թիկունքով զգալով՝ ձեռքից բաց չթողնել խաղի թելերը:

Այսօր խանգավառ աշխուժություն է նույնիսկ թոշակի անցած մրցավարների շրջանում, ինչը կանխորոշված կարգված արհեստավարժ աշխատանքի լավագույն վկայությունն է:

Լիովին համամիտ լինելով մրցավարական կոմիտեի նախագահին ու տրված գնահատականներին, մրցավարական կոմիտեում իրականացված աշխատանքների եռամսյա հաշվետվությամբ հանդես եկավ ՖԻՖԱ-ի գլխավոր մրցավար Սլավա Ղազարյանը, մեկը նրանցից, ովքեր բարձր են պարզել ավանդույթներ ունեցող հայկական մրցավարության դրոշը նաեւ միջազգային մրցաստարեզներում: 40 հոգանոց մեր մրցավարական կորպուսի անունից շնորհակալանի խոսք ուղղելով Պետրոս Տեր-Պետրոսյանին՝ նրա մեկամյա նպաստակամետ գործունեության համար, ուշագրավ թվեր ու փաստեր մեջբերեց բանախոսը: Ռուսաստանում կան 32 հազար, իսկ հարեւան Վրաստանում՝ 1500 գործող մրցավարներ:

Զարմանալի չէ՞ արդյոք, որ մրցավարությանը զինվորագրված ընդամենը 40 նվիրյալներով, առանց արտակարգ պատահարների եւ գերազանցապես լավ կամ շատ լավ գնահատականներով, հարյուրավոր ծանր խաղեր են սպասարկել իր գործընկերները՝ անպատիժ չթողնելով փոխադարձ կշռամբանները անգամ բարձրաստիճան միլիցիոներ-ֆուտբոլիստների մասնակցությամբ պատշգամբային խաղերում եւ շնորհավորագրեր ստանալով մրցակցող երկու կողմերից էլ:

Նման հաջողության գլխավոր նախադայմանը մրցավարական կոմիտեի մշտական վերահսկողությունն էր, որը միայն վերջին երեք ամիսներին գումարել է 14 նիստեր եւ երկու ընդլայնված խորհրդակցություններ: Հատկանշական է, որ ֆուտբոլի հայրենիքի՝ Անգլիայի 32 հազարանոց մրցավարական բանակից ընդամենը 19-ին է վստահված վարելու առաջին դիվիզիոնի հանդիպումները: Այստեղից էլ՝ այդ բարձրակարգ մրցավարների ստացած կլորիկ գումարները, մեր չափանիշներով պատկառելի կանխավճարները ու պարգեւավճարները՝ միջինը 5 հազար դոլար մեկ խաղի համար: Իհարկե, անհամեմատ ցածր է այդ ցուցանիշը մեզ մոտ, բայց առկա է բազմապատիկ աճը՝ նախորդ տարիների համեմատ: Այսպես, եթե 91-ին մեր մրցավարը վարած մեկ խաղի համար ստանում էր 1200 դրամ, ապա այսօր այդ թիվը հասել է 22 հազարի, որը զգալիորեն գերազանցում է միջին աշխատավարձը հանրապետությունում: Այնպես որ, եթե վարձավճարների ասպարեզում հետ ենք մնում հեռավոր արտասահմանից, ապա առաջ ենք անցել ԱՊՀ-ի շատ երկրներից:

Փաստորեն, գործնականում առկա են պրոֆեսիոնալ լիգայի առողջ սաղմերը եւ մնում է միայն արվածի ու արվելիքի պատշաճ վավերացումը: Անշուշտ, իր չեն նաեւ բացթողումները, որոնք առավելապես վերաբերում են տեղական անկատար վերահսկողությանը:

Նաեւ ֆուտբոլում է ամեն ինչ սկսվում էթիկայից, մինչդեռ մեր որոշ տեսուչներ իրենց թույլ են տալիս խաղերին ներկայանալ չսափրված, առանց փողկապի ու մարզահագուստով: Հասկանալի է, որ դրանից չի ավելանում հարգանքը նրանց նկատմամբ, ու պատահական չէ, որ շատ մրցավարներ էլ, առանց քավելու, հանդերձարաններում ծխում են տեսուչների լուռ թողտվությամբ: Բարձրացված հարցի վերաբերյալ լրացում կատարեց Պետրոս Տեր-Պետրոսյանը, իրավացիորեն նկատելով, որ մրցավարը պետություն է ներկայացնում, եւ ոչ մի պարագայում չպետք է զանց առնի դա:

Ոչ մի շրջանակի մեջ չի տեղավորվում նաեւ հրապարակայնորեն, հենց տրիբունաներում գործընկերոջ գործողություններին գնահատական տալու Ե. Կան մասնագիտական կարծիք հայտնելու ժառանգված սովորությունը:

Այնպես որ, մրցավարներն ու տեսուչները պետք է հարգեն համազգեստի պատիվը:

Վերջում ՖԻՖԱ-ի մրցավարը արժանին մատուցեց Ֆեդերացիայի նախագահ Արմեն Սարգսյանին եւ գլխավոր քարտուղար Պավել Խաչատրյանին, որոնց ստեղծած միջազգային լայն կապերի շնորհիվ, միայն անցած 90 օրերին եվրոպական նշանակության արտագնա 7 պատշաճական հանդիպումներ վարեցին մեր մրցավարական բրիգադները: Բարի խոսքեր ասվեցին նաեւ «Մայր հայրենիք» անկախ հեռուստաընկերության ՍՍՄ-ական աշխատակազմի, «Հեռուստաֆուտբոլ» հաղորդաշարի հասցեին՝ մեր ֆուտբոլային անցուդարձի անաչառ լուսաբանման համար:

Ճավալված մտքերի փոխանակության, հարցուպատասխանի ընթացքում արծարծվեցին մրցավարությանը հուզող խնդիրներ, որոնցից առանձնացվեց նաեւ մարզերում մրցավարական կադրեր պատրաստելու եւ նրանց մարզագույքով ապահովելու հիմնահարցը:

Որակական առաջընթացի գրավականներից է առողջ մրցակցությունը նաեւ մեր մրցավարական կորպուսում, որը ամեն դեպքում պետք է հանդես գա իբրեւ մի միասնական մեծ ընտանիք՝ մեն-միակ գերխնդիր նպատակով՝ ֆուտբոլի զարգացումը Հայաստանում:

Եղան նաեւ այլ առաջարկներ, որոնցից ի գիտություն ընդունվեցին երկուսը. այսուհետ հանդիպումները սպասարկող մրցավարների վիճակահանությունը կկայանա ոչ թե խաղերից մեկ-երկու օր առաջ, այլ ամսական երկու անգամ՝ չարախոսներին լռեցնելու համար:

Կորակավորվեն նաեւ մրցավարները՝ առաջին կարգից մինչեւ ՖԻՖԱ-ի, ինչը համապատասխան նորմատիվները հանձնելու դեպքում, հասանելի կլինի նաեւ կին-մրցավարներին:

Նիստի մասնակիցները աշխատասենյակը թողեցին կատարված պարտքի գիտակցությամբ եւ հայկական ֆուտբոլի վաղվա օրվա հանդեպ լավատեսությամբ:

«ՍՊՈՐՏ»
ՍՏԵՓԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԻՍԱԿՈՐՈՒՄ

ԼՈՒՐԵՐ

Առաջատարը կրկին Վ. Հակոբյանն է

Երեւանում շարունակվում է միջազգային (100 վանդականոց) շաշկու հանրապետական առաջնությունը:

Մրցաշարային աղյուսակը կրկին գլխավորում է Վաչիկ Հակոբյանը, որը յոթերորդ տուրում Անի Ջանջուղազյանի նկատմամբ տարած հաղթանակից հետո վաստակել է 6,5 միավոր: Առաջատարից ընդամենը կես միավորով է ետ մնում Գեւորգ Բազոյանը, որը լարված պայքարից հետո պարտության մատնեց իր հիմնական մրցակցին՝ Հրանտ Տոնոյանին: Վերջինս ունի 5 միավոր եւ ընթանում է երրորդ տեղում:

Կրամնիկին փոխարինեց Ազմայփարաշվիլին

Ինչպես արդեն հաղորդվել է, Կրամնիկը հրաժարվել է ելույթ ունենալ դեկտեմբերի 8-ին Հոլանդիայի Գրոնինգեն քաղաքում սկսվելիք աշխարհի շախմատի առաջնությունում: Երեկ ՖԻԴԵ-ի քարտուղարությունից հայտնեցին, որ Կրամնիկի փոխարեն 2-րդ փուլից պայքարը կսկսի Զուրաբ Ազմայփարաշվիլին, որը 1-ին փուլի մասնակիցների մեջ ամենաբարձր անհատական գործակիցն ուներ: Իսկ իրեն Ազմայփարաշվիլուն պայքարի սկզբում կփոխարինի առաջին պահեստային մասնակիցը՝ Վաղիմ Զվյագինցեւը: Գ. Հ.

Ճշգրտում՝ վիճակագիրների համար

Կազանից Երեւան վերադարձավ շախմատի եվրոպական չեմպիոնների գավաթի խաղարկության եզրափակիչ փուլին մասնակցած «Երեւան-Դինամո» թիմը, եւ այժմ կարող ենք մեկ ճշգրտում անել վիճակագիրների համար: Վերջին մրցախաղում, Մոլդովայի «Ռեգինա-Գազի» դեմ պահեստային Նորայր Քալանթարյանը փոխարինել է ոչ թե Նալբանդյանին, այլ Լազարյանին: Այսպիսով, 5-1 հաշվով ավարտված հանդիպման ընթացքում հաղթել են Վլադիմիր Հակոբյանը, Ասոն Անասասյանը, Արտաշես Մինասյանը, Արշակ Պետրոսյանը, Տիգրան Նալբանդյանը եւ պարտություն է կրել Քալանթարյանը: Գ. Հ.

Աղասի-Սարգսյան՝ 2-0

Կալիֆորնիայում անցկացված՝ ԱՄՆ-ի թենիսի միության մրցաշարի եզրափակիչում հանդիպեցին հայազգի երկու մարզիկներ՝ Անդրե Աղասին եւ Սարգիս Սարգսյանը: Հիշեցնենք, որ բազմաթիվ միջազգային խոշորագույն մրցումների հաղթող, նախկինում աշխարհի թիվ 1 թենիսիստ Աղասին վերջին շրջանի անհաջողություններից հետո հայտնվել է համաշխարհային դասակարգման ցուցակի 122-րդ տեղում: Սարգսյանը, ընդհակառակը, այս մրցաշրջանի ընթացքում մի քանի տասնյակ աստիճան վեր է բարձրացել եւ այժմ 57-րդն է: Կալիֆորնիայի «Չելենջեր» մրցաշարում այս երկու թենիսիստների առավելությունը մրցակիցների նկատմամբ ակնհայտ էր, եւ պարզ էր, որ նրանցից մեկը կտիրի գլխավոր մրցանակին:

Ի դեմ, Անդրեն ու Սարգիսը հաճախ են համատեղ մարզումներ անցկացնում, մեկը մյուսի խաղին լավ ծանոթ են: Եզրափակիչն անցավ Աղասու առավելությամբ, եւ նա հաղթեց 2-0 (6-2, 6-1) հաշվով:

Կաֆելնիկովը եւ Կուռնիկովան

Եվգենի Կաֆելնիկովը եւ Աննա Կուռնիկովան ճանաչվել են Ռուսաստանի լավագույն թենիսիստ եւ թենիսիստուհի:

24 ամյա Կաֆելնիկովը մրցաշրջանի վերջում ունեցած հաջողություններ շնորհիվ աշխարհի ուժեղագույնների ցուցակում 5-րդ է: Նա հաղթեց «Կրեմլի գավաթում» եւ երկրորդ տեղը գրավեց աշխարհի առաջնությունում: 17-ամյա Կուռնիկովայի բարձրագույն նվաճումը մասնակցությունն է Ուիմբլդոնի մրցումների կիսաեզրափակիչին:

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունը աննախադեպ իրադարձություն կլինի

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: 1998 թվականի աշխարհի ֆուտբոլի առաջնության կազմկոմիտեի համանախագահ Միշել Պլատինին հայտարարել է, որ 1998 թվականի հունիս-հուլիս ամիսներին Ֆրանսիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունը աննախադեպ իրադարձություն կլինի համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ:

Առաջնության ընտրական մրցաշարին մասնակցեցին 172 երկրների թիմեր, որոնցից 30-ը իրավունք ստացան մասնակցելու եզրափակիչ մրցափուլի խաղերին: Սպասվում է, որ Ֆրանսիայի 9 քաղաքների (Փարիզ, Բորդո, Լիլ, Մարսել, Սոնթելյե, Նանտ, Սենթ էթյեն, Լիոն եւ Թուլուզ) մարզադաշտերում կայանալիք 64 խաղերը կդիտեն մոտ 2,5 միլիոն հանդիսատեսներ: Բացման խաղերը տեղի կունենան հունիսի 10-ին Փարիզում եւ Սոնթելյեում:

Միաժամանակ սպասվում է, որ Ֆրանսիա-98-ը կգերազանցի բոլոր ռեկորդները նաեւ տուրիզմի տեսակետից: Նախատեսվում է, որ միայն Փարիզ առաջնության օրերին կայցելեն 6 միլիոնից ավելի զբոսաշրջիկներ (Մեծ Փարիզի բնակչությունը կազմում է մոտ 15 միլիոն): Իսկ զբոսաշրջիկների ընդհանուր թիվը շատ ավելի մեծ կլինի: Նշենք, որ միայն Իտալիայից եւ Գերմանիայից ենթադրվում է 2 միլիոնից ավելի զբոսաշրջիկների այցը:

Երեկ Տոկիոյում անցկացվեց Միջմայրցամաքային գավաթի խաղ, որտեղ հանդիպեցին «Բոռուսիա»(Գերմանիա) եւ «Կրուզեյրո»(Բրազիլիա) թիմերը: 2-0 հաշվով հաղթեց եւ Գավաթին տիրացավ «Բորուսիան»: Նկարում բրազիլացի Էդմունդոն(Ձախից) եւ գերմանացի Ստեֆան Ռոյտերը գնդակի համար պայքարում

ԱԶԳ

Օրվա հետքով

ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՕՐ

Ստական հոգածության կարիք ունեցող մարդիկ

Դեկտեմբերի 3-ին նշվող հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ սոցիալական ապահովության նախարարությունը ի մի բերեց հաշմանդամների սոցիալական պաշտպանվածության բարելավմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես կազմակերպելով լրագրողների այցը Երևանի պրոթեզավորման եւ կադրերի պատրաստման կենտրոն: 1989 թ. մայիսին ԳՖՀ կառավարությունը որոշեց 1988 թ.-ի դեկտեմբերյան աղետից տուժած Հայաստանի ժողովրդին անվարձահատույց նվիրել այս կենտրոնը: Ընդհուպ 1993 թ. կենտրոնը գործել է GTZ գերմանական ընկերության ֆինանսավորմամբ: Միաժամանակ, գերմանական կողմը կազմակերպել է հայ մասնագետների վերապատրաստումը Գերմանիայում: 93-ից ի վեր կենտրոնի ծախսերը հոգում է ՀՀ սոցապահովության նախարարությունը: Կենտրոնը համապատասխանում է պրոթեզավորման եւ կադրերի պատրաստման ամենաժամանակակից պահանջներին, հնարավորություն տալով ցույց տալ ցանկացած բարդության օրթոպեդիկ օգնություն: Այստեղ ուսանելու հնարավորություն է տրվում ինչպես ՀՀ, այնպես էլ այլ պետությունների քաղաքացիներին: Այժմ այնտեղ հյուրընկալվում է 31 ուսանող նախկին Խորհրդային Միության 5 հանրապետությունից: Հաշվի առնելով հաշմանդամների տեղաշարժման դժվարությունները, կենտրոնը մասնաճյուղեր է բացել հաշմանդամներով առավել հագեցած շրջաններում՝ Գյումրիում եւ Ստեփանակերտում:



Կենտրոնը սպասարկում է միայն չափահաս հաշմանդամներին, քանի որ հաշմանդամ երեխաներով զբաղվում է Մարաշի օրթոպեդիկ հիվանդանոցը: Միջին հաշվարկով 1 պրոթեզի վրա ծախսվում է 1000 դոլար, ընդ որում, այս գումարի 70 տոկոսը կազմում են Գերմանիայից բերվող նյութերը: Գնահատված հաշմանդամ համապատասխան բժշկական սուղգում անցնելուց հետո, կարող է անվճար ստանալ անհրաժեշտ օգնությունը:

1997 թ.-ի մայիսի 5-ին վարչապետի որոշմամբ ստեղծվեց հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողով, որն այս տարվա ընթացքում անցկացրած իր 3 նիստերի ժամանակ քննարկել է հաշմանդամությանն առնչվող առավել հրատապ մի շարք հարցեր, մշակել տարբեր ծրագրեր եւ դիմել միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսավորում ստանալու համար: Ինչպես նշում է հանձնաժողովի նախագահ Ջեմա Բաղդասարյանը, հանրապետությունում բացակայում են հաշմանդամների կենսագործունեությունն ապահովող տարրական պայմաններ, օրինակ, սայլակով տեղաշարժվող հաշմանդամը չի կարող մուտք գործել սոցիալական նշանակություն ունեցող օբյեկտներ: Ներկա փուլում հաստատվել եւ իրագործվում է միայնակ ծերերի եւ հաշմանդամների խնամքի ծրագիր, որի մեջ ներգրավված են բժշկական համալսարանի ուսանողներ: Առայժմ ծրագիրը սահմանափակվում է Երեւան քաղաքով, իսկ հետագայում, բնականաբար, պիտի ընդլայնի ոչ միայն իր ընդգրկման սահմանները, այլեւ բնույթը:

Հաշմանդամների հիմնախնդիրների քննարկումը կամփոփվի դեկտեմբերի 3-ին Սպայի տանը հաշմանդամների միության հանրապետական հավաքի ժամանակ:

ԻՌԵՆ ՍԱԲՈՅԱՆ

«ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ»

Ապահովագրական ինստիտուտի վերստեղծումը

Առաջին օտարերկրյա ընկերությունը Հայաստանում

«Արմենիա» հյուրանոցի կապույտ սրահում երեկ տեղի ունեցավ «Իրան-Հայաստան» ապահովագրական ընկերության (ԱԸ) շնորհանդեսը: Սա օտարերկրյա առաջին ապահովագրական ընկերությունն է Հայաստանում, եւ հիմնադիրների հավաստմամբ, ուղղված է Հայաստանի տնտեսության զարգացմանը: Հիշեցնենք, որ մի քանի ամիս առաջ «Ազգն» առաջինն է անդրադարձել ընկերության ստեղծման նախաձեռնող խմբի աշխատանքներին: Ընկերությունը մեր հանրապետությունում է հաստատվել «Իրան» ԱԸ եւ «Մելլաթ» բանկի ջանքերով, որոնցից առաջինը 62 տարվա պատմություն ունեցող կառույց է: Նրա ձեռքում է իրանական ապահովագրական շուկայի 65 տոկոսը: Ընկերությունը միայն Իրանում ունի 1100 ներկայացուցչություն եւ 200 կարեւորագույն կետեր: «Իրան» ԱԸ փորձն արտասահմանյան երկրներում 25 տարի է: Նա ազդեցիկ դեր ունի Լոնդոնի շուկայում, բազմաթիվ ներկայացուցչություններ Արաբական Միացյալ Էմիրություններում, որտեղ նույնպես առաջին օտարերկրյա ապահովագրական գործակալությունն էր: Ընկերությունը հաստատված է նաեւ Սաուդյան Արաբիայում, Հորդանանում, Բահրեյնում, Օմանում:

Հայաստանում ընկերությունն առաջարկում է հանրապետություն ներմուծվող եւ արտահանվող բեռների, անշարժ գույքի, ավտոմեքենաների ապահովագրություն, ինչպես նաեւ դժբախտ պատահարներից անձի կամավոր ապահովագրում: «Կապվա՞ծ են այս խնդիրները Հայաստանում Իրանի քաղաքացիների եւ «Մելլաթ» բանկի շուրջ հայտնի դեպքերի հետ», մեր հարցին «Իրան-Հայաստան» ԱԸ տնօրենը պատասխանեց, որ «Մելլաթ» բանկը եւ իրենք գործունեություն են ծավալում միանգամայն տարբեր ոլորտներում, իսկ իրենք առհասարակ գործ են ունենալու միայն խոշոր ընկերությունների հետ՝ լինի հայկական թե իրանական: Իսկ Իրանն այս պահին տնտեսական կամ որեւէ այլ շահ չի ակնկալում, գլխավոր խնդիրն ապահովագրության տարածումն է Հայաստանում: Այնուամենայնիվ, օրվա իրանցի բանախոսներից մյուսը նկատեց, որ եթե Հայաստանում լավ վերաբերվեն գրանցված պարսկական ընկերություններին, ապա նրանք էլ ավելի կզարգանան:

«Իրան-Հայաստան»-ը կփորձի ծառայություններ առաջարկել հնարավորին չափ ցածր սակագներով՝ ընդգրկելով առավել լայն խավերի: ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար է. Մուրադյանը, ողջունելով ընկերության հիմնադրումը, ասաց, որ ՀՀ կառավարությունը հայլեր է ձեռնարկում հանրապետության բերքարգացած ապահովագրական շուկան ոտքի կանգնեցնելու:

«Իրան-Հայաստան»-ի տնօրենը հույս հայտնեց, որ բոլոր կառույցները, այդ թվում զանգվածային լրատվության միջոցները, կնպաստեն ինստիտուտի կայացմանը, եւ ինքն ուրախ կլինի հանդես գալ մշտապես առաջինն արձագանքող «Ազգի» էջերում:

Ա. Գ.

ADANA
COMMERCIAL BANK

ԻՆՉՊԵՍ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

«Ադանա» բանկը հայտարարում է Հայաստան շտապ փոխանցումներ կատարելու ասպարեզում ծառայությունների որակի բարելավման մասին: Այժմիկ 24 ժամվա ընթացքում ձեզ կարող են փոխանցումներ կատարել աշխարհի ցանկացած կետից եւ գործնականորեն Ռուսաստանի բոլոր տարածաշրջաններից՝ «Ադանա» բանկի, «Կրեդիտ-Մոսկվա» բանկի եւ Ռուսաստանի Արտաքին առեւտրի բանկի (Վնեշտորգբանկ) մասնաճյուղերի թղթակցական ցանցի միջոցով:

Մոսկվայից եւ Սանկտ Պետերբուրգից դրամական փոխանցումների իրականացման տոկոսադրույքը՝ 1%: Ռուսաստանի տարածքաշրջաններից տոկոսադրույքը՝ 1% կամ առնվազն 10 դոլար:

Ձեզ սպասում ենք հետեւյալ հասցեներով՝

Մոսկվայում՝ «Կրեդիտ-Մոսկվա» ԲԱԲ
Մոնետչիկովսկի 6-րդ նրբանցք, 8 (մետրոյի «Պավելեցկայա» կայարան): Հեռ. 237-55-93, 233-42-43
Սանկտ Պետերբուրգում՝ «Կրեդիտ-Մոսկվա», «Սանկտ-Պետերբուրգսկի» մասնաճյուղ
Սադովայա փող., 54 (մետրոյի «Սադովայա» կայարան):
Հեռ. 310-19-67, 310-13-69
Երեւանում՝ «Ադանա» բանկ
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Նալբանդյան 5:
Հեռ./Ֆաքս՝ +(885)39 07157, +(885) 2 585980
Տելեքս՝ (64) 243340 ADANA SU

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՑԱՆԿԸ

Սանկտ-Պետերբուրգ, Բոլշայա Մորսկայա փ. 29	հեռ. (812)	312-78-00
Բլագովեշչենսկ, Սովետսկիյ նրբ. 65/1	հեռ. (4162)	42-10-47
Խաբարովսկ, Մոսկովսկայա փ. 7	հեռ. (4212)	33-58-13
Վիբորգ, Կրեպոստնայա փ. 16	հեռ. (81278)	2-53-02
Նախոդկա, Շկոլնայա փ. 19	հեռ. (42366)	4-69-71
Նովոռոսիյսկ, Սովետների փ. 47	հեռ. (86134)	5-74-14
Սոչի, Կարլ Լիբկնեխտի փ. 10	հեռ. (8622)	92-73-35
Կրասնոյարսկ, Լենինի փ. 143	հեռ. (3912)	21-85-29
Իրկուտսկ, Սվերդլովի փ. 40	հեռ. (3952)	24-16-72
Ստավրոպոլ, Կոմինտերնի փ. 7	հեռ. (8652)	26-17-54
Կալինինգրադ, Բոլնիչնայա փ. 5	հեռ. (0112)	34-05-00

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ՝ ☎ 529353

հաճախակ.	մակս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	



ՎԱՃԱՌՎՈՒՄ է
առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան 115/70 քմ, Չարենցի 52, 3 հարկանի քարե շենքի 2-րդ հարկում:
Հեռ.՝ 55-66-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

Լուծարվել է
«Անի» վարձակալական ձեռնարկությունը:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժին

ՀՀ սոցիալական ապահովության նախարար

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆԸ

ներկայացնում է

«ՀՀ սոցիալական քաղաքականության հարցերը»:

Դեկտեմբերի 4-ին, ժամը 18.00-ին:

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճ, 5-րդ հարկ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149 Պատուեր 718 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 2.12.1997 Գինը՝ 100 դրամ